Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Арцзаганкъ". կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang."

ԱՐՁԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

„ԱՐՁԱԳԱՆՔ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելիամինովսկի փող. № 22, տուն Խանդալամեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ։

Օտարաքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція „Арцзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»։

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԹԻՖԼԻԶԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ
Շաբաթ, փետրվարի 11-ին, 1895 թ. լինելու է
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ
Կոտիլիոնով, յօգուտ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան և Հայոց Հրատարակչական Ընկերութեան։ Երաժշտութիւնն է եւրոպական և տեղական։ Մուտքի գինն է 2 ռ. 10 կ.։ Սկիզբը ժամի 9-ին։ Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Ընկերութեանց գրասենեակներում, Բարեատինսկայա փողոց, տուն Գեդեւանովի № 4, և Սերգէեվսկայա փողոց, տուն Ալիխանովի № 16։ 2—1

ՍԻՐՈՂԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԿ. ԹԱՏՐՈՆ
Հինգշաբթի փետր. 9-ին Հայ դերասանական խումբը կը ներկայացնէ մասնակցութեամբ տ. Ս. ՀՄԱՅԵԱՆԻ
I
ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ
Ողբերգութիւն 5 արար. հեղին. Խ. Վ. Գալփայեանի.
II
ԳԱՀԱԼ ՂԱՂՕ
Վօդեվիլ 1 արար. հեղին. Փուլինեանի.
Տոմսակները ծախվում է թատրոնի կասսայում։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայկական խնդիր։
Ամենապ. Իզմիրլեան Պատրիարքի նամակը։
Լորդերի պալատը և հայկական խնդիրը։
Ֆրանսիական մամուլը և հայոց խնդիրը։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—«Արձագանքի» հեռագիրները։ Վեհափառ հայրապետի ուղևորութիւնը։ Հայաստանում կատարուած տաճկական անգթութիւնները։ Կոստանդնուպոլսից։ Տաճկաստանի հայ գիւղերի սարսափը։ Հետաքրքրական նիւթեր Հայաստանի մասին։ Կարաթէոդորի կազմած ծրագիրը։ Օտար բանկապատակ քրիստոնեաների վրայ յարձակումները Կ. Պոլ. Անգլօ-ամերիկեան միութիւն. Կով. առանձին զօրագնդեր։ Ալէքսանդրապոլից։ Պարահանդէս յօգուտ Կովկ. Բարեգ. և Հրատ. ընկերութեանց։ Նամակ Նոր-Նախիջևանից։ Նամակ Կողբից։ Նամակ խմբագրութեան։ Մետեխի հայ եկեղեցու երրորդ տարեգարձը։ «Աւելի Ակոսսայի» ներկայացումը։ Կոնցերտ յօգուտ ձրի ճաշարանի։ Գիւղական վարչութիւնների կազմակերպութեան նոր ծրագիր։ «Կավկազ» լրագրի մի թղթակցութեան առթիւ։
ԹԱՏՐՈՆ-ՀԱՍԱՐԱԿ.— Նամակ Բեռլինից։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(«The Daily News», փետրվ. 5.)

Հայկական գործերի առթիւ երէկ Westminister Palace Hotel-ում գումարուած ժողովի օգուտն այն կը լինի, որ ցոյց կը տայ Թիւրքերին, թէ մեր ազգի հասարակաց կարծիքն այս մեծ խնդրի նկատմամբ մի միաշունչ զօրութիւն է ներկայացնում։ Դա մի այնպիսի ժողով էր, ուր հաւաքուած էին քաղաքականութեան երկու կողմի մարդիկ՝ բոլորն էլ համաձայն այն կէտում, թէ անհրաժեշտ են ամենազօր միջոցներ՝ մի ճշմարիտ ռէֆորմ յառաջ բերելու համար։ Երէկուայ որոշումները պահանջում են, որ քննիչ կոմմիսիայի եւրոպական անդամները ջոկ զեկուցումն տան։ Անշուշտ այդ անդամները կը ներկայացնեն իրենց պետութիւններին ջոկ-ջոկ զեկուցումներ, և այս կամ այն կերպով նրանց տեղեկագրի էական իմաստն անտարակոյս կը յայտնուի։ Կան ձևականութեան հարցեր նոյն իսկ Թիւրքաց կառավարութեան հետ գործ տեսնելիս, որ լորդ Կիմբերլէյն հարկադրուած է ի նկատ առնել. կոմմիսիան գնացել է քննութիւն անելու կոտորածների մասին. Նրա Թիւրք անդամները եւրոպական անդամների վերահսկողութեան ներքոյ են, և սրանք պէտք է հնար տան Թիւրքերին իրենց գործը տեսնելու։ Եթէ Թիւրք անդամները օր և է գեղծում անեն, այդ բանը հարկաւ իսկոյն կ'իմացուի։ Մեր կառավարութիւնից որոշակի խնդրեցին, որ նա ռէֆորմներ պահանջէ։ Նա արդէն մասամբ իւրք ձեռնարկել է այդ գործին, և նրա նախաձեռնութեան ապացոյցը կոմմիսիայի խառն կազմութիւնն է, եթէ ոչ նոյն ինքն կոմմիսիան։ Զարմանալի է, որ արդէն այդքան բան յաջողուած է։ Մի քանի ամիս առաջ Հայաստանի ամենաջերմ բարեկամներն անգամ դժուար թէ վստահանային յուսալ, թէ Թիւրքիան կը համաձայնուի մի կոմմիսիա նշանակել իւր իսկ արած կոտորածները եւրոպական ներկայացուցիչների աչքի տակ քննելու համար։

Պետութիւնների միաբան և ազդու գործողութիւնը, որ պահանջվում է միտինգի որոշմամբ, իւր ժամանակին կը լինի. սակայն դրանից առաջ պէտք է հնար տալ կոմմիսիային իւր վրայ դրուած պարտաւորութիւնը կատարելու։ Երէկուայ միտինգի ատենաբաններից ոմանք անցնում էին չափաւորութեան սահմանից։ Միստր Գօդլը կը ցանկար, որ այժմէն ռուսաց և անգլիական գնդեր ուղարկուէին՝ կոմմիսիայի անդամներին և հայերին պաշտպանելու համար։ Դրա դէմ կարելի է շատ բան ասել, ամենից առաջ այն, որ դժուար թէ Թիւրքիան յօժարուի այդ աստիճան նուաստացնել իրեն՝ առանց պատերազմի։

Բացի այդ՝ աւելի լաւ կը լինի որ զինուորներն իսպառ հեռու մնան գործից, մանաւանդ այս միջոցին. Նրանց ներկայութիւնը հեշտ կարող էր ընդհարումներ յառաջ բերել անկանոն փաշաների հետ, և զէնքերի հենց առաջին շառաչիւնից ամեն տեսակ դժուարութիւններ կը ծագէին։ Մեր կառավարութիւնը գործ ունէր մի այնպիսի խնդրի հետ, որ ամենից դժուարն է ամբողջ դիւանագիտական ասպարէզում, և մինչև այժմ գործել է շատ մեծ յաջողութեամբ։ Թէ այլ ևս շատ բան կայ անելու՝ այդ երևում է մեր Կ. Պոլսի թղթակցի վերջին նամակից, որ հրատարակում ենք այսօր։ Տեսնում ենք, որ դաշնութիւնների տեղը փոխվում է և Սասունի և Մուշի բնորոշ գարշութիւնները կրկնվում են Փոքր-Ասիայի մի ուրիշ մասում։ Մի թղթակից պատմում է, որ Եօզղատում մարդիկ խմբովին բանտարկվում են, որ ծաղրելի քննութիւններ են լինում՝ առանց պաշտպանութեան հնար տալու ամբաստանեալին, որ մարդիկ դատապարտվում են իրենց ոխերիմ թշնամիների մատնութեամբ, որ անտեսի ոճիրներ են պատահում, որ քրիստոնեաներին բանտ են ձգում «անդրոշմ» Աստուածաշունչ գործածելու համար, և փոթոթ 'մարշուտիւնից' յառաջ եկող ամեն տեսակ մեծ ու փոքր բռնութեան գործեր կատարվում։ Ներկայ րոպէիս մեր պարտքն է հրապարակ հանել այդ քստմնելի չարիքը։ Դրանց հատուցումն անշուշտ շուտով կը պահանջուի։

—

Ահա թէ ինչ են գրում մեզ Կ. Պոլսից Եօզղատի դէպքերի մասին, շարունակում է «Daily News»-ը.

Մինչ Թիւրքական կոմմիսիան Սասունի և Մուշի ոճիրները քննելու վրայ է, հեռացնելով լրագրողներին, կ'արժէ յառաջ բերել Փոքր-Ասիայի ուրիշ մասերում պատահած մի քանի դէպքեր։ «Daily News»-ի թղթակիցներից ոմանք բողոքել են այն ջանքերի դէմ, որ գործվում են Կ. Պոլսում դէպքերի մանրամասնութեանց հրատարակումը խափանելու համար։ Ոչ միայն տեղական թերթերն իրաւունք չունեն օր և է լուր հրատարակելու հայերի կրած զրկանքների մասին, այլ նոյն իսկ փոստի նամակները բացվում են և ճանապարհորդները չարաչար խուզարկվում, որպէս զի նրանց վրայ մի արգելուած բան գտնեն։ Այս է պատճառը, որ դէպքերի մանրամասն նկարագրերը շատ հազւ ու կտոր են հասնում մեզ, և պէտք է մի առ մի կցել նրանց իրար հետ, որ մարդ կարողանայ մի ամփոփ պատմութիւն կազմել։

Եօզղատի անցքերի լուրը նոր հասաւ այս տեղ։ Եօզղատը հեռու չէ Էնկիւրիայից (Angora). իսկ դա միայն քսան և չորս ժամ երկաթուղու ճանապարհով բաժանուած է մայրաքաղաքից։ Գիտենք որ 1893 թ. դեկտեմբերին մի քանի դժուարութիւններ էին պատահել այնտեղ հայ և մահմեդական բնակիչների միջև։ Իւրաքանչիւր կողմ պնդում էր, թէ յանցաւորը միայն միւսն է։ Մայրաքաղաքի պաշտօնակալները այդ լուրերն ստանալուն պէս՝ մի զինուորական կոմմիսիա ուղարկեցին այնտեղ գործի էութիւնը քննելու համար։ Հայերից շատերը գրի անցրին իրենց գանգատները և մատուցին կոմմիսիային՝ բաւարարութիւն ստանալու յուսով։ Այդ հայերին անմիջապէս բանտարկեցին։ Անցեալ տարուայ ութ ամիսների ընթացքում առ նուազն երեք հարիւր մարդիկ բանտ ձգուեցան Եօզղատի մէջ։ Հրաման եղաւ քննել նրանց, և բանտարկուածներից մի խումբ տարուեցաւ Էնկիւրիա. բայց որովհետև այդ քաղաքում եւրոպական պետութեանց ներկայացուցիչներ կան և իմացուել էր, որ նրանք ուշի ուշով հսկում են կոմմիսիայի արարքի վրայ, այս պատճառով կալանաւորներին դարձեալ Եօզղատ տարան քննութեան համար։ Քննութիւն կոչուած խաղի միջոցին թոյլ չտուին նրանց վկաներ կանչելու, և նրանց դատապարտութիւնն արդէն առաջուց որոշուած բան էր։ Ոմանք շատ ամիսներ բանտում մնալուց յետոյ ներումն ստացան սուլթանից, ոմանք էլ անպարտ ճանաչուելով արձակուեցան։ Փառասուն հոգի դեռ բանտումն են. դրանցից մի քանիսը դատապարտուած են մահուան պատժի, միւսները պիտի կալանքում մնան այլ և այլ ժամանակով։

Եօզղատի մի շատ նշանաւոր հայ, իբրև վրդովմունքներին մասնակցող ամբաստանուելուց յետոյ՝ մի այնպիսի հիմք յառաջ բերաւ իւր անձը պաշտպանելու համար, որ ամեն տեղ բացի Թիւրքիայից բաւական կը լինէր նրան արդար դուրս բերելու։ Նա հաստատեց, որ վրդովմունքի միջոցին նա բանտումն էր, ինչպէս որ այդ յայտնի է բանտի բոլոր ծառաներին և ամեն մի եօզղատցու։ Բայց և այնպէս նրան դատապարտեցին և վերստին բանտ ձգեցին։

Մի ուրիշ կալանաւոր հայ, և յատկապէս բժիշկ, ամբաստանուած էր, թէ աղմուկի ժամանակ հրացան է արձակել եկեղեցու պատուհանից և մի զափթիէ սպանել։ Նա յառաջ բերաւ, թէ այդ միջոցին մի ուրիշ տեղ է գտնուել, և յանձն առաւ չորս յայտնի վկաներ ներկայացնել, որոնցից մէկը մահմեդական է՝ իւր ասածի ճշմարտութիւնը հաստատելու համար, սակայն ատեանը չուզեց լսել նրա վկաներին,— և նրան էլ դատապարտեց։ Նրա ամբաստանողները հենց այն մարդիկն էին, որոնց դէմ մի քանի ամիս առաջ նա գանգատ էր յարուցել՝ իւր հարսին բռնաբարելու պատճառով։ Այս դէպքը հաղորդուեցաւ անգլիական և ուրիշ դեսպանութեանց, և դեսպաններից շատերը զարմանք յայտնեցին դատարանի հասած նախատինքի դէմ։ Եօզղատի այս բոլոր աղմուկների միջոցին հայերը շրջակայ գիւղերից բերվում էին և բանտ ձգվում, իսկ Թիւրք աստիճանաւորներն օգուտ էին քաղում հանգամանքից՝ թշուառներին զրկելու և նրանցից անձնական վրէժ հանելու համար։

Հաւաստում են, թէ Սեվասում երկու ամիս ժամանակով բանտարկուել են տասներկու տարեկան մանուկներ։ Նրանց յանցանքն այն է եղել, որ մի փոքրիկ ընկերութիւն են կազմել էժան գնով դասագիրք և մատիտ գնելու և չքաւոր աշակերտներին բաժանելու համար։ Յետոյ նրանք բերվում են Կ. Պոլիս և ներողութիւն ստանում սուլթանից։

Հայերի կրած հալածանքի մէկ տեսակն էլ գրքերի խուզարկութիւնն է։ Վտանգաւոր է ունենալ որ և է գիրք, նոյն իսկ հին գիրք, եթէ նա վաւերացուած չլինի գրաքննիչի նըշանով կամ դրոշմով։ Վերջին ամիսների ընթացքում բազմաթիւ հայեր բանտարկուած են լոկ նրա համար, որ նրանց մօտ գտել են գրաքննիչի կնքով չդրոշմուած վաճառելի Ս. Գրքեր, մինչդեռ օրէնքը պահանջում է, որ իւրաքանչիւր գիրք, ի վաճառ հանուելուց առաջ, մի այդպիսի կնիք ունենայ, այլապէս նա արգելուած է։

Թիւրքիայի գրաքննական հանգամանքները լուսաբանելու համար կ'արժէ յառաջ բերել մի փոքրիկ, բայց բնորոշ դէպք։ Մի ամիս առաջ մի քանի կապ օրացոյցներ էին ուղարկուած այս տեղ Վենետիկից, ուր նրանք աւելի էժան և լաւ են տպվում։ Մաքսատան մէջ նրանք բոլորն էլ բռնվում են քննութեան համար և 'ի վերջոյ դատապարտվում, որովհետև դուրս է գալիս, որ Հայաստանեայց եկեղեցու տօնած սուրբերի շարքում յիշուած են եղել և մի քանի հայոց հին թագաւորներ։

Այս նամակից յետոյ «Daily News»-ում կարդում ենք հետևեալ հեռագիրը Մարսէյլից.

Կ. Պոլսից լուր են հաղորդում, թէ Սուլթանի համար մասնաւոր կերպով Լօնդօնում աշխատող սինիօր Քալիմէնէօսը հեռագրով իմաց է տուել վեհապետին, թէ չէ կարողացել իւր կողմը գրաւել Անգլօ-հայկական Ընկերութեան գործադրիչ անդամներին։ Այս ծածուկ առաքելութեան անյաջող ելքն ամրացրեց Ռուստէմ փաշայի դիրքը, որ միշտ զեկուցել էր Բ. Դրան, թէ համակրական զգացմունքները հայերի նկատմամբ օր ըստ օրէ զօրանում են ամբողջ Միացեալ Թագաւորութեան մէջ, և թէ զուր կ'անցնեն սինիօր Քալիմէնէսի ջանքերը՝ ազդելու մամուլի կամ հասարակաց կարծիքի վրայ, որ աւելի տրամադիր է հաւատ ընծայել հիւպատոսների տեղեկագրին, քան թէ իւր անբաւարար վկայութեան։ Համերաշխութիւնը Ռուսաստանի, Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև հաստատ է մնում և դրան խախտելու համար Իլդիզ Քիօսկում եղած ջանքերը դերև են։ Ընդհանուր կարծիքն այն է, թէ արդէն մշակուած է ռէֆորմների մի ծրագիր, որ պիտի առաջարկուի Սուլթանին պետութեանց յատուկ նուիրակների կոմիտէի ձեռքով։

—

ԱՄԵՆԱՊ. ԻԶՄԻՐԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆԱՄԱԿԸ

(«The Daily News», փետրվ. 8)

Հեռ. Ռէյտերի գործ. Վիեննայից փետր. 7.

Կ. Պոլսից այստեղ հասած հեռագիրներին նայելով՝ ամենապ. Իզմիրլեան Պատրիարքը մի հովուական նամակ է գրել Անդրիանուպոլսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին, խիստ յանդիմանութիւն անելով նրան, որ նա ստորագրել և իւր վիճակի անուանի հայերին ստորագրել է տուել մի հանրագիր առ Սուլթանը, որով շնորհակալութիւն է յայտնվում Վեհափառ Թագաւորին Տաճկաստանի հայոց վայելած բարիքների համար և դատապարտվում են իբր թէ Փոքր-Ասիայում խռովութիւն սերմանող հայերը։ Պատրիարքը իւր թղթի մէջ հրաւիրում է եպիսկոպոսին ուշադրութիւն դարձնել մի քանի ուրիշ եպիսկոպոսների ընթացքի վրայ, մանաւանդ Սիվասի եպիսկոպոսի վրայ, որ մի ամիս առաջ հրաժարուեցաւ ստորագրել նոյնօրինակ մի ուղերձ, որ տեղական Թիւրք պաշտօնակալները հարկադրում էին ստորագրել։ Ինչպէս երևում է՝ ինքն Մեսրոպ սրբազանն էլ հարկադրուած է եղել ստորագրել ուղերձն Ադրիանուպոլսի Թիւրք աստիճանաւորների ճնշմամբ, որոնք էլ հետևել են միայն աւելի բարձր հրամանին։

—

Խոտորնակի ճանապարհով Մուշից այստեղ հասած մի նամակ հաստատում է, թէ յառաջ քան Հայաստանի քննիչ կոմմիսիայի մայրաքաղաքից մեկնիլը, Մուշ գալիս է Սուլթանի հրամանով Երզնկայ Թիւրք սպաներից կազմուած մի ուրիշ կոմմիսիա՝ իբրև վիճակը քննելու և ստոյգ զեկուցումն տալու համար։ Հէնց որ այս կոմմիսիան գալիս է՝ կոտորածից խոյս տուած և Մուշում պատսպարուող Սասունցիք որոշում են շար ի շար կանգնել և Թուրքերէն գրուած գանգատ մատուցանել, սակայն նահանգապետ Թահսին փաշան, որ արդէն հեռացուած է իւր պաշտօնից, սաստիկ պատիժ սպառնալով հրաման է տալիս բոլոր գրագիրներին՝ ոչինչ չգրել հայերի համար։ Այնուհետև հայերը հայերէն են շարագրում իրենց տեղեկագիրը և երկու անգամ տանում նահանգապետի պալատը, ուր նստած էր կոմմիսիան, բայց իւրաքանչիւր անգամ պահապանները հալածում են տեղեկագիրը բերող պատգամաւորներին և մինչև անգամ ծեծում նրանց։

Հայերը երրորդ անգամ փորձ են անում իրենց գրութիւնը կոմմիսիային յանձնելու, և այս անգամ աւելի բազմաթիւ ուղեկիցներ են տալիս պատգամաւորներին, որոնց աղաղակը լսելով, կոմմիսիայի անդամներից ոմանք վերջապէս դուրս են գալիս և թուղթն ընդունում։ Դրանց թւում լինում է մի գնդապետ, որին հայերը իսկոյն ճանաչում են, որովհետև նա Սասունում գործող զօրքի սպայ էր։ Այս պատճառով նրանք գոչում են. «Ահա մեր դահիճներից մէկը, որ ուզում էր կոտորել մեզ»։ առ որ գնդապետը պատասխան է տալիս. «Ոչ, ես չէի ուզում կոտորել ձեզ, այլ քրդերն էին այդպէս անում.»

—

ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏԸ և ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Անգլիական պալատների ներկայ նստաշրջանը բացուեցաւ թագուհու գահական ճառով յունվարի 24-ին կամ նոր տոմարի փետրուարի 5-ին։ Նոյն օրն էլ երկու պալատում ատենախօսութիւններ սկսուեցան, որոնց մանրամասն նկարագրութեամբ լի են անգլիական թերթերը։ Մենք յառաջ կը բերենք «Daily News»-ի փետրվարի 6 համարից քաղելով միայն այն կէտերը, որոնք վերաբերվում են հայկական խընդրին։

Գահական ճառի գրեթէ սկզբում ասուած է. «Իմ լորդեր և ջէնտլմէններ, Փոքր Ասիայի մի մասում կանոնաւոր կամ անկանոն Թիւրք զօրքերի ձեռքով հայերի դէմ գործուած բռնութիւնների լուրն իմ կառավարութեան հասնելուն պէս՝ ես հարկաւոր համարեցի, միւս պետութեանց հետ միասին, ազդարարութիւններ անել Բ. Դրան։ Սուլթանը դիտաւորութիւն յայտնեց խստիւ պատժելու այն սպաներին կամ զինուորներին, որոնք յանցաւոր են եղած այդ գործում, և մի կոմմիսիա ուղարկեց տեղն ու տեղը քննութիւն անելու համար։ Երզրումում հիւպատոսներ ունեցող պետութեանց նուիրակներն ուղեկից են այդ կոմմիսիային»։

Այդ ճառի առթիւ լորդերի պալատում խօսող անձերից լորդ Ռէլբին ասաց.

«Ես գոհ եմ Հայաստանի վերաբերմամբ պետութիւնների բռնած ընթացքից և կարծում եմ, թէ մեր ազգը կարող է վստահ լինել, որ ամեն զգուշութիւն գործ կը դրուի հարցն արդարութեամբ վճռելու համար։

Մարքիզ Սալիսբիւրին ասաց ի միջի այլոց.

«Գալով Հայաստանում կատարուած անգթութիւններին, ցաւում եմ, որ չեմ կարող այժմ մի վերջնական բան ասել այն հասարակ պատճառով, որ գահական ճառի այս նիւթին վերաբերեալ կէտը մեզ յայտնում է, թէ խնդիրը ներկայ րոպէիս քննութեան տակ է (sub judice), ուստի անյարմար և գրեթէ անպատշաճ կը լինէր որևէ կարծիք յայտնել այն առարկաների մասին, որ կոչուած է քննել կոմմիսիան և ապա թէ իւր զեկուցումը տալ։

Ես կը ցանկանայի նկատել թէ շատ եմ կասկածում — արդեօք քննութիւնը պէտք եղածին չափ լիակատար կը լինի, եթէ նա զբաղուի միայն սուլթանի սպաներին և կամ զինուորներին վերաբերուած յանցանքներով։ Եթէ ճիշդ է մեր լսածը, յանցանքներ գործել են շատ մարդիկ, որոնք սուլթանի ոչ սպաներն են, ոչ էլ զինուորները, և յամենայն դէպս պէտք է — թէև չգիտեմ արդեօք այդ ստոյգ է,— թէ յանցանքները չեն առանձնացած մի կամ միւս կրօնական համայնքի մէջ, ուր որ կատարուել են։

Ես ոչինչ չունիմ առարկելու կառավարութեան արած քայլի դէմ, այլ միայն վստահանում եմ յիշեցնել նրան, որ նա գործ ունի մի շատ ծանր խնդրի հետ, շատ դիւրագրգիռ հպատակների հետ, մի ազգաբնակութեան հետ, որ հիմնովին բաժանուած է ցեղի և կրօնի տարբերութիւններով. Եթէ կառավարութիւնն այդ ազգաբնակութեան մի կողմն անցնի և նրան հաւատ ներշնչէ, թէ նրա պահանջները դրսից պաշտպանութիւն կը գտնեն, այն ժամանակ թող նա չմոռանայ, որ ահագին պատասխանատուութեան տակ կ'ընկնի, եթէ որ և է յոյս արծարծէ, որ մտադիր չինէր իրագործել. Կան շատ տեսակ քաղաքագիտական հայեացքներ, որոնց կարելի էր հետևել այս աղետալի գործում. սակայն մենք ամենավատին հետևած կը լինէինք, եթէ այդ արևելեան ժողովրդների մէկ մասին մի այդպիսի զգացմունք ազդենք, թէ հզօր կերպով օգնելու ենք նրա ձգտումներին և պահանջներին, և երբոր ճգնաժամի րոպէն հասնի՝ բարձի թողի անենք նրան մի քանի սփոփական խօսքերով և թող տանք որ նա ինչպէս գիտէ, այնպէս էլ դիմադրէ իր գրգռուած հակառակորդի բարկութեան.

Լորդ Րօզբերի.—Միլօրդներ, ես լիովին համաձայն եմ ազնիւ մարքիզի կարծեաց հետ արտաքին քաղաքականութեան նկատմամբ. Վստահ եմ որ նա վճռականութիւն կ'ունենայ ասելու թէ ես էլ, երբ հակադիր կուսակցութեան կողմն էի, նրանից պակաս զգուշութիւն չէի բանեցնում, և եթէ նա զգում է, թէ զգուշութեան և լռութեան կարիք կայ Հայաստանի հարցը քննելիս, ես նրանից էլ աւելի եմ զգում այդ բանը, որովհետև այժմ իմ պատասխանատուութիւնն աւելի ծանր է, քանի որ խօսում են մեր ազգի կառավարութեան անունով. Ես կ'ասեմ միայն, որ այս խնդրում մենք հնար ունեցանք ամենից աւելի շահակից Մեծ Պետութիւնների մտերմական համերաշխութեամբ գործ անելու, այն է՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Իտալիայի. Մեր ամենաջերմ ցանկութիւնն էր՝ հնար տալ Եւրոպայի հասարակաց կարծիքին, որ նա մի ճիշդ գաղափար կազմէ այս աղէտալի լուրերի մասին. և թէպէտ Թիւրքիան մերժեց Իտալիայի մասնակցութիւնը, որովհետև դա հիւպատոս չունի Էրզրումում,—այնու ամենայնիւ հաւատացած եմ, որ նուիրակներ ունենալով երեք պետութիւններն այնպէս արժան և ազդու հսկողութիւն կ'անեն կոմիսիայի վրայ, որ դա անշուշտ ճշմարտութիւնը յերևան կը հանէ. (Լսեցէք, լսեցէք)

Արդ՝ եթէ ճշմարիտ է, որ մեր ամենաջերմ համակրութիւնը պատկանելու է Փոքր Ասիայում բնակւող մեր քրիստոնեայ եղբայրակիցներին, որոնք նորերս անտանելի վշտեր են կրել, և երկրորդ՝ եթէ այդ լուրերը ստուգուին— երանի՜ թէ ունենայի ձեռիս տակ դէթ մի հաստ պաշտօնական զեկուցումն, որ հնար տար ինձ հերքելու նրանց,—այն ժամանակ անկարելի է այդ քրիստոնեաներին իրենց այժմեայ պայմանների մէջ թողնել, որովհետև եթէ թողուին, նրանք այնպիսի մի վրէժխնդրութեան կը հանդիպեն, որ նրանց առաջուայ վիճակը ներկայից էլ վատ կը լինի».

Համայնքների պալատում խօսուած ճառերը հետևեալ անգամ կը հաղորդենք.

Փ. Վ.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ և ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐԸ

Ֆրանսիական «La Marine Française» թերթը իր արտաքին տեսութեան մէջ հետևեալն է ասում հայկական խնդրի մասին.— «Հիւանդ մարդը (այսինքն Տաճկաստանը) նորից խօսակցութիւնների առիթ է տալիս. Եւրոպական պետութիւնները կրկին հրաւիրուած են այդ մերձիմահ հիւանդի անկողնու մօտ. Բայց թէ ինչ դուրս կը գայ այդ համախորհրդից, դժուար է նախագուշակել. Արդեօք Հայաստանում տեղի ունեցած անցքերը պատճառ կը լինին Օսմանեան պետութեան նոր բաժանման. Լոնդոնն այդ հարցին պատասխանում է — «Այո». Պետերբուրգն ասում է—«Ո՛չ». Փարիզը և Բերլինն ասում են.— «Կարող է պատահել».

Յետոյ լրագիրը յիշելով տաճկական զօրքերի գործած սոսկալի անգթութիւնները հայերի դէմ, անցնում է քննիչ յանձնաժողովի նշանակութեան և այդ առիթով նկատում է. — «Յամենայն դէպս ոչ մի կասկած չկայ, որ եւրոպական պետութիւններն անվիճելի իրաւունք ունին միջամտելու Հայաստանի գործերին. Բերլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածը պետութիւններին ուղղակի իրաւունք է տալիս այդ անելու և եթէ հայերի սոսկալի մեղադրանքները թուրքերի դէմ հաստատուեն, այն ժամանակ եւրոպական պետութիւններին կը մնայ գործել ամենայն խստութեամբ և համերաշխութեամբ. Մեզ թւում է, որ եթէ կոտորածը ճշմարիտ տեղի են ունեցել, ի հարկէ թուրքերն են մեղաւոր».

Նոյն մտքով յօդուածներ են նուիրում հայկական խնդրին ֆրանսիական ազդեցիկ լրագրները՝ «Temps», «Courier du soir», «Matin» «Journal des Débats», և այլն.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄՐՁԱԳԱՆՔԻ» ՀԱՂՈՐԴՆԵՐ

(Յատուկ Թղթակցից)

ԲԱԹՈՒՄ.— Փետրուարի 7-ին 1 ժամ 49 րոպէ. Ըստ առաջ սկսած կայարանի պլատֆորմը, դէպի կայարանը, կայարանի առաջի հրապարակը, շրջակայ փողոցները ծածկուած են ժողովրդի անհամար բազմութեամբ. Վեհափառ Հայրապետի գնացքը ժամանեց ուղիղ ժամ 11-ին. Հանդիպումն այնքան փառաւոր էր, որ նկարագրել անհնարին է. Կեցցէներ և հայերի աղաղակները չեն ընդհատւում մի վայրկեան անգամ.

Նահանգական կառավարիչը, Բաթումի քաղաքագլուխը, ձայնաւորները, հայկական կոլոնիայի անդամներն ընդունեցին Հայրապետին վագոնում և ողջունեցին բարի գալուստը. Վեհափառ Հայրապետը ժողովրդին ողջունելով և օրհնելով լուռ բարեկամ [illegible] պատրաստուած շքեղ քառաձի կառքը. ժողովուրդն անհամար էր, որ շրջապատել Վեհափառ Հայրապետի կառքը որ անհնարին էր առաջ շարժուել, ուստի կառքն ընթանում էր լուռ քայլ Լօրիս-Մելիքեան փողոցով ժողովրդի աննկարագրելի բազմութեան պատճառով շարժումն անկարելի էր դարձել.

Եկեղեցու գաւթին հասնելով Վեհափառ Հայրապետը մտաւ առաջնորդական տուն, այտեղ հանդիպեցին Նորին Օծութեան հայ հոգևորականութիւնը զգեստաւորուած խաչ ու խաչվառներով և քահանայք. այստեղ էին հայ [illegible] գաւառներից ուսուցիչները և աշակերտութիւնը. դուրս ամենքը գնում էին հանդէսին առաջից. Վեհափառ Հայրապետը մտաւ եկեղեցի, կարճ աղօթքից յետոյ օրհնեց ժողովրդին և գնաց իր համար պատրաստուած յատուկ բնակարանը՝ Ֆրանսիա հիւրանոց, որի ամբողջ միջին յարկը վարձել է և պատրաստել իր հաշւով պ. Եղիազարեանը Մանթաշեանը Վեհափառի և Նորա ուղեկիցների համար, որոնց ժամանակ որ նորանք մնան Բաթումում.

* * *

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Երեկոյեան, ամսոյս 6-ին, ժամը 11-ից սկսած Թիֆլիսի բոլոր հայ եկեղեցիների զանգակները ղօղանջում էին և ծանուցանում Վեհափառ Հայրապետի մեկնելը Թիֆլիսից. Ժողովրդեան խուռն բազմութիւն հոսում էին կրկին առաջնորդարան, եկեղեցու բակը և առաջնորդարանի մօտի փողոցները. Բազմաթիւ պաշտօնեայք շտապում էին Վեհափառ Հայրապետին «գնաս բարով» մաղթելու. Վեհափառին խմբուած էին Թիֆլիսի Հոգևորական դասը Սրբազան Գէորգ Երզնկեանի առաջնորդութեամբ և հայ օտարական և տեղային դպրոցների աշակերտներն իրենց տեսուչներով և դասատուներով. Վեհափառ Հայրապետը ուղեկցութեամբ առաջ գնաց ներկայ եղող աշակերտներին և աշակերտուհիներին հետևեալ խօսքերով. «Եղէք էք, զաւակներս, հայրենի համար աղօթելու. դուք անմեղ էք և մաքուր, ձեր աղօթքն Աստուած կը լսէ, աղօթեցէք հայրենի համար. Նա ճանապարհորդ է, հայրենին ալ ձեզ կ'օրհնէ, օրհնեալ լինիք».

Երկրիս կառավարչապետ գեներալ-ադյուտանտ Ս. Ա. Շերեմետևի գլխաւոր տանեան կառավարիչ կամէր-խնկեր պ. Ճշեգլովին իր կողմից ուղարկել էր Վեհափառ Կաթողիկոսին բարի ճանապարհ մաղթելու. ներողութիւն խնդրելով որ [illegible] անձամբ չկարողացաւ ներկայ գալ.

Ժամը ճիշդ 1-ին Վեհափառ Հայրապետը Հոգևորականաց դասով իջաւ Վանքի մայր եկեղեցին և աղօթելուց յետոյ մտաւ իրեն համար յատուկ պատրաստուած քառաձի կառքը, որ շարժուեց դէպի երկաթուղու կայարան. Մի թէ ծնողը կեցցեների աղաղակից և բազմաթիւ կառքերը սկսան միմեանց ետևից ուղեկցելով հայրապետի կառքին դէպի կայարան.

Կայարանի արքայական սենեակներում քաղաքի ներկայացուցիչներն օրհնելուց և փոքր ինչ հանգստանալուց յետոյ Վեհափառ Հայրապետը մտաւ իր համար պատրաստուած առանձին գնացքի սալօն-վագոնը.

Երբ շոգեկառքը շարժուեց, ժողովրդեան անընդհատ կեցցէներ աղաղակելով բաւական տեղ վազում էր գնացքի ետևից. Հոգևորական դասից Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Թիֆլիսի Լեռնի առաջնորդ գեր. Գէորգ Եպ.-Երզնկեան Սուրէնեանը, արք. Բաղդասարեան, Նահապետ և Համազասպ վարդապետները և արք. Յովսէփ և Տէրունի աբեղաները. Հանդիսի ընթացքը և Վեհափառ Հայրապետի իջման ժամանակ խաչակիրն էր արք. Գրիգոր քահանայ Աղաքանեան, իսկ գաւազանակիրը Համբարձում Վարդան սարկաւագը.

Վեհափառ Հայրապետի գնացքով ուղեկցում էին տեղական խմբագրութիւններից՝ «Մշակ»ի խմբագրութեան բոլոր անդամները in corpore, — «Կավկազ» լրագրի, «Տիֆլիսկի Լիստօկ», «Նոր-Դար» լրագրի, «Բլուեր» և «Հասկեր» լրագրական գործակցութեանց ներկայացուցիչները և մայրաքաղաքի ու արտասահմանեան թերթերի երկու ներկայացուցիչներ.

Կային և բազմաթիւ ուղեկիցներ և քաղաքացիք.

ՄՑԽԵԹ 2 ԺԱՄ 45 ՐՈՊԷ

(Հեռագրով)

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց այցելել Մցխեթի հին պատմական Վրաց եկեղեցին, ուր Նորին Օծութեան ընդառաջ վրաց հոգևորականութիւնը. Տաճարում ներկայ էին խուռն բազմութիւն վրացի և հայ գիւղացիների և Վեհափառ Հայրապետի բոլոր ուղեկիցները. Թէ տաճարին և թէ երկրի վերաբերեալ պատմական տեսութիւններ տալիս էր մեր յարգելի հնագէտ պատմաբան պ. Ալէքսանդր Երիցեանը. Վեհափառ Հայրապետը ունկնդիր էր լինում բացատրութիւններին ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ դիտում էր տաճարի հնութիւնները.

Նորին Օծութիւնը յուզուած էր և փոքր լռութիւնից ու մտածմունքից յետոյ տաճարի բակից դիմեց ներկայ եղողներին հետևեալ խօսքերով.

«Այս եկեղեցին նոր յիշատակներ զարթեցրեց մէջս. Երբ կը կարդայի մեծ պատմագիր Մովսէս Խորենացու պատմութիւնը, կ'իմանայի որ Ս. Նունէ կոյս, որ Հռիփսիմեան դասին էր, եկաւ Վրաստան այս երկիրը, այստեղ, ուր կատարուած էր [illegible] թագաւորութեան [illegible] քարոզել Քրիստոնէութիւն. Աստուած [illegible] որ մի որ ես հասնեմ իմ ուխտին, անձամբ տեսանեմ այդ սուրբ տեղը և ահա այսօր կատարուեց իմ ուխտը.

Ըստոնց մեծ քաղաք է եղեր և նե-

մեծ մայր եկեղեցի. այժմ կը տեսնեմ մի սովորական գիւղ է. բայց որքան երջանիկ է այն ժողովուրդ, որ այժմ այստեղ տանում ժառանգութիւն է սուրբ երկրին. Ըստոնց ես որ կը տեսնեմ Վրաց թագաւորների գերեզմանները, կը յիշեմ Հայոց թագաւորների գերեզմանները. մենք ալ ունինք այդ սրբազան յիշատակները. Կ'օրհնեմ զձեզ, զայս ժողովուրդ և ձեր եկեղեցին և կը մաղթեմ երջանկութիւն այս ժողովրդին».

Վեհափառ Հայրապետի խօսքը թարգմանւում էր վրացերէն արժանապատիւ Դաւիթ տէր քահանայ Եաղուբեանը.

Մցխեթից Վեհափառը այցելեց տեղական Հայոց փոքրիկ եկեղեցին, ուր Նորին Օծութեան ընդառաջ եկաւ եկեղեցու արժանապատիւ Տէր Ղևոնդ քահանան իր եկեղեցու պաշտօնեաներով. Եկեղեցու բակը և ներսը լի էր հայ գիւղական կանանցով, օրիորդներով և մանուկներով. Եկեղեցում աղօթելուց յետոյ Վեհափառ Հայրապետը յուզուած ասաց.

«Այս փոքր եկեղեցին ալ ինձ կը յիշեցնէ այլ յիշատակներ. Օրհնեալ լինիք. Աստուած օրհնէ զձեզ. Աղօթեցէք որ համբերութիւն և նպատակներս յաջող լինին».

Ապա նոյն շքով վերադառնալով կայարան Նորին Օծութիւնը մեկնեց Մցխեթից.

Մցխեթից մեկնելուց առաջ Նորին Վեհափառութիւնն ուղարկեց Թիֆլիզ Նորին Բարձր Սրբազնութեան Վրաստանի էկզարխոսին հետևեալ հեռագիրը.

«Թիֆլիզ, Վրաստանի էկզարխոս Բարձր Սրբազան Վլադիմիրին. Աստուած արժանացրաւ ինձ կատարել իմ հինաւուրց ուխտս, աղօթել այն սեղանի, ուր առաքելահաւասար Նունէ կոյս Լուսոյ կանթեղ վառեց [illegible] Լուսաւորութեան. Պատուիրութեան Ձեր Սրբազնութեան շնորհակալութիւն եմ յայտնում այն ընդունելութեան համար որ ինձ ցոյց տուին այս տաճարում, որ սրբավայր է բոլոր քրիստոնեաներին, աղօթս ձեզ համար».

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԴՐՈՒԱԼԻ ԿԱՅԱՐԱՆ ԺԱՄ 4

(Հեռագրով)

Նորին Վեհափառութեան ներկայացան Ատամբիւրդ գիւղի հայ հասարակութեան պատգամաւորութիւնը իր գիւղական զօրքով. պատգամաւորութեան առաջնորդում էր գիւղի աւագ քահանայ արժանապատիւ Տէր-Յովհաննէսը.

Վեհափառ Հայրապետը վագոնի պատուհանից օրհնեց ժողովրդին և սիրալիր խօսակցութիւն սկսեց նրանց հետ.

—Առողջ էք եկեր թէ առողջ.

—Առողջ եմ, առողջ էք, Վեհափառ Տէր.

—Հայերն գիւղը.

—Գիւղնը.

—Լաւ էք.

—Լաւ ենք, կեցցէք դուք, Վեհափառ Հայրապետ.

—Ընծայ ալ երկրագործներ էք.

—Երկրագործներ, արհեստաւորներ, վաճառականներ, այգեգործներ.

—Այգիներ շատ ունիք, գինի ալ շատ կ'ունենաք. գինին կը խմէք թէ կը ծախէք.

—Ըսելի խմում ենք, Վեհափառ Տէր (Հայրիկն ուրախ ծիծաղում է).

—Մեծ բան մը կայ հարցնելու. գիւղը ինչ է. զօրաց ունիք.

—Ունինք, Վեհափառ Տէր.

—Օրհնեալ լինիք. զաւակներս գիւղում ու լաւ ժողովուրդ էք, գիւղ մեր պատուական եկեղեցին շինել էք, ունիք արժանաւոր քահանայ, որ կը փառաւորելու, ձեր եկեղեցին Պատուեցէք, սիրեցէք ձեր քահանային, որ այդչափ հոգ կը տանի ձեզ համար. Նա պատուական քահանայ է, ես անոր սիրտը վարձատրեմ. ձեր այլուրի սիրելոյն համար, աղօթեցէք որ ինձ երկար տարի ձեզ համար և անոր էլ օգնեցէք ձեր զբաղմունքի փառաւորութեանը. Օրհնեալ լինիք.

ԳՈՐԻ, ԺԱՄԸ 5 և 40 ՐՈՊԷ

(Հեռագրով)

Գնացքը երբ մօտեցաւ Գորիին, մեծ բնակչութեան սուրբ գտնուող կայարանը բոլորովին լեցուած էր ժողովրդով, պատկերաւոր կայարանում այնքան բազմութիւն կար ժողովուած, որ հնար չէր լինում նրանց գնացքի ճանապարհից հեռացնել. Պլատֆորմի վրայ ասեղ գցելու տեղ չկար, բազմը բաւ ներշանակութեամբ. Դպր, երկաթաոդ, կին, երեխայ, հայեր, վրացիք, ամեն մի դասակարգից սկսեալ ազնուական կեցցէ էին գոչում, որ ամբողջ կայարանը լցնում էր. Կայարանի դրան դահլիճի մուտքը պահպանում էին Կովկասեան զօրագնդի հայ զինուորները. Հասարակութիւնից շատերը բարձրացել էին սիւների վրայ և պատուհանները. Դահլիճում սպասում էին Գորուայ քաղաքագլուխը, զինուորական գնդի հրամանատարը, տեղական սեմինարիայի դիրեկտոր պ. Սորոկինն և այլ բարձրաստիճան պաշտօնեայք և հասարակութեան խուռն բազմութիւն Ըստ այդ էին և տեղական օրիորդական դպրոցի սանուհներն իրենց վարժուհիներով և ուսուցիչներով. Բազմաթիւ կոչնակ կայարանի դահլիճում պատրաստուած էր ճոխ սեղան. Պլատֆորմի վրայ խրանում ժողովրդի ողևորութիւնն այնքան բուռն էր, որ հնար չէր լինում որևէ կարգ պահպանել, ամեն մէկը ձգւում էր, աշխատում էր առաջ վազել Հայրիկին տեսնելու, գոնէ նայել Նրա վրայ.

Գորուայ քաղաքագլուխ պ. Դուլիշամբարեանը գլխից Նորին Վեհափառութեան հետևեալ խօսքերով.— «Երջանիկ եմ որ ինձ վիճակուած է ողջունել Ձերդ Վեհափառութեամբ Գորի քաղաքի ամբողջ հասարակութեան կողմից. Թոյլ տուէք ինձ, Ձերդ Վեհափառութիւն, արտայայտել բոլոր Գորեցիների և իմ ցանկութիւնը, որ Դուք պատուհանական հիւր չլինէք մեզ մօտ, այլ որ մօտ ապագայում մեզ բախտաւորեցնէք կրկին Ձեր այցելութեամբ». Վեհափառ Հայրապետը շնորհակալութիւն յայտնեց քաղաքագլխին համար ողջունի համար իր շնորհակալութիւնը բոլոր Գորեցիներին առանց խտրութեան ազգերի և դասակարգերի, ապա օրհնեց բոլոր ներկայացողներին և օրհնեց նրանց.

Գորուայ հոգևորականութեան թելում Նորին Վեհափառութեան ներկայացաւ 105 ամեայ պատկառելի ծերունի հայ քահանայ Տէր-Յովհաննէս Տէր Միհասեանը. Հայրապետը յուզուած և սիրալիր ընդունեց ծերունի քահանային և հարցրաւ. «Քանի կամ ծերացել ես սեւեր».— Ինձը, Վեհափառ Տէր, պատասխանեց քահանան և սկսեց թուել.— Դաւիթ, Դանիել, Եփրեմ, Յովհաննէս, Ներսէս, Պօղոս, Գէորգ, Մակար և Ձերդ Վեհափառութիւնս».

Աղջի ժամանակ Նորին Վեհափառութիւնը յուզեցեալ առաջին բաժակն առաջարկեց Նորին Կայսերական Մեծութեան Նիկոլայ Երկրորդի կենաց Թագաւոր կայսեր կենացը ժողովրդի հետ պատկառանօք. «Ձեռ տեղ որ կրկնեմ, ինձ կը զլխաւորէ ժողովուրդը, կը տեսնեմ որ իմ ժողովուրդը բարեկեցիկ գրուած է, շնորհիւ Բարեպաշտ Կայսր Նիկոլայ Երկրորդի, որ վարուց չէ որ ընթանկ է Հօշեկ և Հայոց աղօթքը և Իր ժողովրդը. կ'առաջարկում այս բաժակ Թագաւոր Կայսեր կենացը. կեցցէ Նիկոլայ Երկրորդ Կայսրը». Բոլոր հասարակութիւնը սաստիկ ողևորուած, ամեն բաժակները բարձրացրած կեցցէ էին գոչում և Գորուայ Հայոց օրիորդական դպրոցի աշակերտուհիները երգում էին «Տէր, պահեա զԿայսրն մեր» հիմնը.

Երկրորդ բաժակը Նորին Վեհափառութեան առաջարկեց Գորուայ հայ ժողովրդի կենացը.—«Դուք գուցէ Նորին Օծութիւնը—ցրուած ժողովրդի մի հատուածն էք, սակայն օտարազգի և օտարախօս ժողովրդի մէջ, պէտք է պահպանէք ձեր մայրենի լեզուն ձեր սուրբ եկեղեցին. Հօրհնեմ ձեզ, Դուք կամեցներ էք այս ձեռ սիրով պատրաստուած պատուով ինձ. շնորհակալ եմ, Ես կը սիրեմ զհողովուրդ և ժողովրդի ալ գիրս կը սիրէ. Աղօթեցէք ինձ համար որ այս երկրում միշտ մնամ և աղօթեցէք որ յաջողի իմ նպատակս. Ես ևս կ'աշխատեմ և կ'աղօթեմ ձեզ համար. Կեցցէ Գորուայ հայ ժողովուրդը».

Կեցցէ՛, կեցցէ՛, Հայրիկ, Թողայ ամբողջ դահլիճը. Վեհափառ Հայրապետի թէ առաջին և թէ երկրորդ ճառերը թարգմանեց վրացերէն լեզուով արժ. Դաւիթ քահանայ Եաղուբեանը.

Ապա Սրբազան Գէորգ արք-Երզնկեանը Գորուայ ժողովրդի Թարգման հանդիսանալով իր հօտի ուրախութիւնը և հրճուանքն արտայայտեց ու նկատողից, որ տեսնելով Նորին Վեհափառութեան հանել է իր բազմանքին. Նորին Սրբազնութիւնն առաջարկեց հայ եկեղեցու Վեհապետի Նորին Վեհափառութեան կենացը, որին հետևեց անվերջանալի և ցնծալի «Կեցցէ»ն. Աշակերտուհիների խումբը երգեց «Հնչեցեն լարք».

Գորուայ պ. քաղաքագլուխը կրկին առաջարկեց Վեհափառ Հայրապետի կենացը ասելով հետևեալը.— «Թոյլ տուէք կրկին առաջարկել Նորին Օծութեան կենացը և բազմամեալ Նրան բարի ճանապարհորդութիւն և բարի վերադարձ և երկար կեանք այն ազգի համար, որին այնքան սիրում է և որն իրեն այդպէս սիրում է».

Աղջի վերջում ողևորուած և զգեցիկ բանախօսութիւն արաւ Գորուայ յաջորդ արժանապատիւ երիտասարդ Եղիշէ վարդապետ Մուրատեանը.—«Լինում են ամբողջ շրջաններ ժողովրդի կեանքում — ասաց հայր Մուրատեանը—լինում է ամբողջ դար, որի ընթացքում այդ ժողովրդի կեանքի հորիզոնի վրայ չէ փայլում և ոչ մի պայծառ աստղ, դէպի որն ուղղուած լինին բոլորի աչքերը. չէ լինում մի սրբազան գաղափար, որ ջերմացնէ ամենքի ոգիները. Այսօր երջանիկ է Գորուայ ժողովուրդը որ տեսնում է այդ ընդհանուրի սիրոյ կենդրոնը, Վեհափառ Հայրապետին. Մի տասնեակ տարի առաջ այս բազմահաց քաղաքում իր շրջաններում տեսնում, հաջիւրով կարելի էր համարել այն հայերին, որոնք հայերէն գիտէին իրենց մայրենի լեզուն, իսկ այժմ շնորհիւ Նորին Վեհափառութեան ներշնչած ոգու ամենքն էլ իրենց պարտքն են համարում սովորել իրենց մայրենի լեզուն և պետի աշխատում արդարացնելու Վեհափառ Հայրապետի յոյսերը».

Գորուայ քաղաքային դասի և հերթերի կեանքից յետոյ Վեհափառ Հայրապետը կրկին օրհնեց սիրով և ժողովրդը և բալքեր ուղղեց դէպի գաճիչի դուռը. Ընդհանուր, ամբողջ կեցցէներից խլանում երկյաբանի զանգակի ձայնը. Սրտաշարժ էր տեսարանը, երբ նայում էիր, թէ ինչպէս այդ հազարաւոր ամբոխը արտասուելով ջերմեռանդութեամբ միմեանց հրմշտում էր աղաղակում և խռովահուզութեան աշխատում էր մի համբոյր կորզել Նրա աջից. Ով տեղ էր երևում, թէ ինչ է նշանակում ժողովրդի զգացմունքը, թէ ինչ է նշանակում Մեծ մարդը և ժողովրդի դէպի Նրա անցնելը, ներկան և ամպական ունեցած սէրը, որ հաւատոյ սատարման անխտրականութեան է հասել. Ես որքան ազգերին են այն դասակարգերը, որոնք չեն կարողանում հասկանալ այս բուռն սիրոյ որպիսին և յաջորդ նշանակութիւնը. Ես որքան ազգերին են նորա...

Թիֆլիզի ուղեկիցներից մի քանիսը շտապում են համբուրել Նորին Վեհափառութեան աջը և մնաս բարև մաղթել. մի համբոյր էլ մենք ենք դրոշմում Հայրիկի աջին. Ուղիղ ժամը 6 և 30 րոպէին է, Հայրիկը վագոնի պատուհանից օրհնում է ժողովրդին, շոգեկառքը շարժում է և խլացուցիչ կեցցէները Թնդացնում են օդը.

Ս. Հ.

«Նով. Վր.»-ին հաղորդում են Սոֆիայից. — «Հայաստանում կատարուած տաճկական գազանութիւնները բուլղարական մամուլի մէջ բազմաթիւ մերկացումներ առաջ բերին այն կողոպուտների և սպանութիւնների մասին, որ մահմեդականները գործ են դնում Մակեդոնիայում քրիստոնեաների դէմ. Յանցաւորներին ակնյայտնի պաշտպանում է տաճիկ կառավարութիւնը: Բուլղարական մամուլի մերկացումները տաճկական վարչութեան կողմից էլ աւելի նոր ճնշումներ են առաջացնում քրիստոնէից և գլխաւորապէս բուլղարների դէմ: Տաճիկ իշխանութիւնները փակում են նրանց դպրոցները, հալածում են քահանաներին և ուսուցիչներին, բուլղարական եկեղեցիներն ուժով խլում են և տալիս յոյներին և սերբերին. Մի տեղում՝ բուլղար ժողովուրդը ի նշան բողոքի բոլոր եկեղեցիները փակից և երկու ամիս է, որ այնտեղ բոլորովին եկեղեցական պաշտամունք չի լինում: Այժմ տեղական տաճիկ իշխանութիւնները Կոստանդնուպոլսից եկած կարգադրութեան հիման վրայ, ամբողջ Մակեդոնիայից ուժով ժողովում են քաղաքային և գիւղական համայնքների կնիքները և նրանցով կնքում են սուլթանի անունով կազմած կեղծ ուղերձներ, որոնց մէջ ասուած է իբր թէ երկրում տիրում է խաղաղութիւն և հանգստութիւն «շնորհիւ բարեխնամ տաճիկ կառավարութեան»: Ժողովուրդը բողոքում է, բայց նրան պաշտպանող չկայ: Այսօր այստեղ լուր է տարածուել թէ ռուսական հիւպատոս Բիտոլին ուղևորուեց Կ. Պոլիս»:

***

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ հեռագրում են «Daily News»-ին փետրվարի 6-ից. — «Բէյրութից ստացուած տեղեկութիւնները հաստատում են այդ գաւառում տեղի ունեցած անկարգութիւնների լուրերը: Գործերը բոլորովին կանգ են առել: Դամասկոսի և Բէյրութի քրիստոնեաների մէջ կատարեալ սարսափ է տիրում: Շատ քրիստոնեաներ իրանց տները շրջապատել են պատնէշներով — բարիկադներով՝ երկիւղ կրելով, որ մահմեդականները գիշեր ժամանակ յարձակումն կը գործեն: Երեք գլխաւոր արաբական լրագրերը, որոնք միակ ամենօրեայ գաւառական լրագրերն են, անորոշ ժամանակով դադարեցրած են կառավարութեան հրամանով: Այդ այն պատճառով է արած, որ տաճիկ իշխանութիւնը վախենում է, որ չլինի թէ այդ լրագրերը խօսք փախցնեն գաւառում տեղի ունեցած անկարգութիւնների մասին: Այդ լրագրերի հրատարակիչները և արտօնատէրերը քրիստոնեաներ են և այդ հանգամանքն աւելի սաստկացրել է տաճիկ կառավարութեան կասկածը, որ այդ լրագրերին միշտ թշնամաբար էր վերաբերւում»:

***

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ հեռագրում են «Daily News»-ին. — Իզմիրի շրջակայ մի քանի հայ գիւղերում սարսափ է տիրում. Ժողովուրդը վախենում է որ մահմեդականները, որոնք սաստիկ գրգռուած են, յարձակումն կը գործեն հայերի վրայ:

***

«Temps» լրագրի թղթակիցը Հայաստան մտնելու իրաւունք չստանալով վերադարձաւ Լոնդոն: Հաւատացնում են որ նա իր հետ նշանաւոր և հետաքրքրական նիւթեր է տարել:

***

«Daily News» հաղորդում է որ Կարաթէոդորի փաշան արդէն ներկայացրել է Սադր-Ազամին Հայաստանի ներքին վարչութեան ռեֆորմների պատրաստ ծրագիրը, բայց սուլթան Համիդը վերադարձրել է նրան, գտնելով որ այդ ծրագիրը գոհացուցիչ չէ:

***

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ շարունակում են օտարահպատակ քրիստոնեաների վրայ յարձակուել: Այս օրերս մի ռուս և մի անգլիացի երբ դուրս էին գալիս Թատրոնից տիկնանց հետ միասին, ծանր վիրաւորանքների ենթարկուեցին երկու տաճիկ սպաների կողմից. Անգլիացու գլխին մի բռունցքի հարուած տալով վայր ձգեցին նրան և շփոթութիւնից օգուտ քաղելով նրան բաժանեցին իրեն ռուս ընկերից. Երբ անգլիացին կրկին գտաւ իր ընկերոջը, տեսաւ որ ռուսը վիրաւորուած է դաշոյնով և ռէվոլվէրի գնդակով.

***

«Նով. Վր.» հաղորդում է թէ ճանապարհորդ Խիմէնոր և սեր Աշմէդ-Բէրթլէյն աշխատում էին որ Լոնդոնում անգլօ-մահմեդական միութիւն հիմնուի:

***

«Ստեփանի» հեռագրական գործակալութիւնը հեռագրում է Հռոմից, թէ Հայաստանում քննութիւն կատարող իտալական գործակալները շատ նշանաւոր վկայութիւններ են ժողովել Սասունի կոտորածի ականատեսներից:

***

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հաղորդում են, որ զինուորական նախարարութիւնը մի նոր ծրագիր է մշակում, որի նպատակն է մահմեդականներից [illegible] կազմել. Այդ զօրագնդերի մէջ կընդունուին այն մահմեդականները, որոնք ցանկութիւն կը յայտնեն զինուորական ծառայութիւն մտնելու. Այդ ծրագիրն — ինչպէս հաղորդում է «Տիֆլ. Լիստոկ»-ը — նախապէս պիտի մշակուի Կովկասեան կառավարչապետի խորհրդի մէջ և ապա կը յղուի ներկայացնելու զինուորական նախարարութեան քննութեան.

***

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են — Թեմիս առաջնորդ գերապ. Սուքիաս եպիսկոպոսը Թիֆլիզից վերադառնալով եկել է Մեծ-Ղարաքիլիսա, որտեղ ահա մի շաբաթ է հիւր է. Այստեղից Ս. Առաջնորդը գալու է Աղէքսանդրապօլ: Սրբազան առաջնորդին դիմաւորելու է գնացել վիճակի յաջորդ արժանապատիւ Հայր Աշոտը.

— Տեղւոյս սիրողների մշտական խումբը առաջիկայ չորեքշաբթի օրը փետրվարի 8-ին մի ներկայացումն է տալու բարեգործական նպատակով, «Արշակ երկրորդ» և «Նոր Դիոգինէս» պիէսները:

***

Շաբաթ օրը, փետրվարի 4-ին, Թիֆլիզի ժողովարանում լինելու է պարահանդէս կոտիլիոնով յօգուտ «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան» և «Թիֆլիզի Հայոց Հրատարակչական Ընկերութեան»: Մենք լիայոյս ենք որ հայ հասարակութիւնը իր սրբազան պարտքը կը համարէ ներկայ լինել մեր երկու մեծ ընկերութեանց պարահանդէսին, բայց չենք հասկանում թէ ինչու այդ ընկերութեանց վարչութիւնները երկու պարահանդէսներն ամփոփում են մէկի մէջ... Շատ վաղ է սկսւում ծուլութիւնը:

***

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ յունվ. 31-ին.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Նոր Նախիջևանի ազգային հաստատութիւնների մասին ընդհանրապէս այն կարծիքն է տիրում, որ նոքա միանգամայն ապահով վիճակի մէջ են հետևաբար և՝ նախանձելի և՝ օրինակելի միւս հայաբնակ քաղաքների նման հաստատութիւնների համար. սակայն, իրօք, այդ կարծիքը միանգամայն հիմնովին սխալ է. Առնենք Ն.-Նախիջևանի ազգային դպրոցները, որ ամենից առաջ պիտի համապատասխանէին տիրող կարծիքին, և ինչ կը տեսնենք.—կը տեսնենք, որ դոցանից միայն Թեմական դպրանոցն է, որ կարողանում է [illegible] բոլորել տարին՝ առանց մուրացկանութեան դիմելու. սակայն այդ ապահովութիւնը ևս կարծեցեալ է, որովհետև վաղը միւս օր, հանգամանքների փոխուելով, դպրանոցի գոյութեան պայմանները ևս պիտի փոխուեն անտարակոյս...

Մնացեալ դպրոցները, ինչպէս՝ Ս. Հախվերդեանց օրիորդական դպրոցը, Ս. Համբարձման և Ս. Թէոդորոսի ծխական դպրոցները և Աստուածածին եկեղեցւոյ Արհեստագիտական ծխական դպրոցը հազիւ հազ ծածկում են անհրաժեշտ ընթացիկ ծախսերը և մուրացկանութեա՛մբ միայն կարողանում են մաքառել խեղդող կարօտութեան հետ.

Այսպէս՝ Ս. Համբարձման դպրոցի հոգաբարձութիւնը անցեալ տարի ձեռնարկելով դպրոցի համար նոր շէնքի կառուցման, այսօր [illegible] պարտք ունի... Արհեստագիտական դպրոցը, եթէ դրամական միջոց ունենար, վաղուց հիմնովին նորոգած կը լինէր դպրոցական մի ան[illegible] տարի ստիպուած չէր լինել վիճակախաղ սարքել, որ, պէտք է խոստովանել, գլուխ է բերվում ահագին դժուարութեամբ.

Ասել այն է, որ Ն.-Նախիջևանի ազգային դպրոցները, համարեա առանց բացառութեան, անապահով վիճակի մէջ են և ստիպուած են լինում միշտ դիմել հասարակութեան օգնութեանը և յուսալ նրա առատաձեռնութեան վերայ.

Ահա այսպիսի կարօտութիւնից ստիպուած՝ Հախվերդեանց օր. դպրոցի արգոյ հոգաբարձութիւնը նախկին տարիների նման այս տարի ևս, յունուարի 27-ին, ակումբի դահլիճում կազմել էր մի մանկական երեկոյթ, յօգուտ իր խնամքին յանձնուած դպրոցի չքաւոր աշակերտուհեաց.

Թէև ս. Հախվերդեանց օր. դպրոցը իր արդիւնաշատ գոյութեամբ գրաւել է տեղւոյս հասարակութեան սէրն ու համակրութիւնը, սակայն պէտք է ասեմ, որ վերջին ժամանակներս հասարակութեան այդ զգացմունքը կարծես լոկ պատմական գոյն է ստանում... Մեր հասարակութեան այն մասը, որի ներկայութիւնը սոյն օրինակ բարենպատակ հանդէսներում արդէն գրաւական է նոցա յաջողութեան (դրամական յաջողութեան մասին է խօսքս) — հասարակութեան այդ մասը, ասում եմ, զլացել էր պատուել իր ներկայութեամբ այդ հանդէսը. որով անտարակոյս, մեծապէս խրախուսուած և մխիթարուած պիտի լինէին այն աշխատաւոր հոգաբարձուհիները, որոնք, որպէս մրջիւններ՝ հոգալով իրենց խնամքին յանձնուած չքաւոր աշակերտուհեաց պիտոյքը՝ իրենց սեռին յատուկ տոկունութեամբ արիապէս մաքառում և յաղթահարում են այն արգելքներին, որ պիտի խափանէին դպրոցի յառաջադիմութեան կանոնաւոր ընթացքը. և փառք ու պատիւ այնպիսի հայ տիկնանց, որոնք սիրով կամենում են կատարել իրենց պարտքը.

Արդէն երկրորդ շաբաթն է, որ այստեղ է Թիֆլիզի հայ դերասանական խումբը՝ պ. Սրէլեանի ղեկավարութեամբ. Ակումբի դահլիճում տուին երկու ներկայացումն, որոնցից «Մեծապատիւ մուրացկանները» անցաւ շատ յաջող: Երկու ներկայացման ժամանակ ևս մենք ցաւով նկատեցինք, որ դերասաններից մի քանիսը իրենց դերերը լաւ չգիտէին...

«Մեծապատիւ մուրացկանների» մէջ պ. Սրէլեանը շատ յաջող էր (Սրբուզ աղա) հաճելի էր մանաւանդ այն, որ նա պահպանել էր Պոլսոյ ոճը, մինչդեռ միւս դերակատարների լեզուն կամ խառնուրդ էր արևելեան և արևմտեան բարբառների կամ ամբողջապէս՝ արևելեան: Պ. Պարոն-Սարգսեանը, օրինակ, տեղ տեղ գործ էր ածում «կիլի» (կը լայ), «առնում ա» և այլն..., որ ծանր է մանաւանդ նախիջևանցիների ականջին և միանգամայն անտեղի «Մեծապատիւ մուրացկանների» մէջ.

Այսպէս թէ այնպէս՝ մենք շնորհակալ ենք հայ դերասաններին ու դերասանուհիներին, որ շնորհ բերելով մեր քաղաքը՝ արդի հայախօսութեան գոնէ մի փոքրիկ ճաշակ տուին տեղացիներին, Թատրոնական բեմից. Խումբը մտադիր է մնալ այստեղ մինչև մեծ պաս և տալ ևս մի 4 5 ներկայացումն:

Տեղական թատերասէրները ևս անգործ նստած չեն. դոցանից մէկը՝ պ. Խ. Բաղչիսարայեանը տեղական կեանքից և Նախիջևանի բարբառով գրել է մի կոմեդիա «Մօղնի Նշանտուքը», որ այս օրերս պիտի ներկայացնեն.

Ց. Բ[illegible]:

***

ԿՈՂԲ (Ղազախի գաւառ), 30 Յունվ.

(Թղթակցութիւն „Արձագանքի")

—

Ներկայումս Կողբում և առ հասարակ Ղազախի գաւառում տարածուած է տիֆ հիւանդութիւնը, որին գիւղացիք «վերք-հիւանդ» են ասում Կան այնպիսի ընտանիքներ, որ չորս հինգ հոգի հիւանդ կայ.

Հիւանդութեան տարածուելուն նպաստում է հիւանդներին յաճախելը՝ գիւղական վատ և վնասակար սովորութիւնը.

Ղազախի հրաւիրեցին բժ. Յ. Աղասաբեանին, որ 27 ին եկաւ. բայց ի պաշտօնէ ստիպուած էր միւս օրը՝ 28-ին վերադառնալ. Թէ այստեղ և թէ միւս գիւղերում բժշկի մեծ կարօտութիւն կայ.

Յունվարի 28 ին տեղս բերին Հաղբատու Սուրբ Նշանը, որին գիւղից կէս վերստ հեռու դիմաւորեցին զգեստաւորուած քահանաները, ժողովուրդը և ուսումնարանի աշակերտները.

Հաղբատու փառահեղ բարեհ. Նորա տանկեանը վարդապետը յունվ 30-ին վերադարձաւ, հետը տանելով Ս Նշանը.

Այստեղ եղանակը գարնանային է. այս տարի կարգին ձիւն չեկել.

Բ[illegible] Տէր-Ղ[illegible]ն:

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պ. Խմբագի՛ր.

Ազգիս վեհափառ Հայրապետի Բարձր հրամանաւ ներկայ 1894/95 ուսումնական տարուայ սկզբից՝ Սաղեան գիւղի Ս. Ստեփաննոս վանքում բացուած է Ընծայարան, և նրան կից գրադարան: Ուստի այսու խնդրուում է հայ հեղինակներին և թարգմանիչներին իրանց աշխատութիւններից մի մի օրինակ բարեհաճել ուղարկել նուիրաբար յիշեալ գրադարանին հետևեալ հասցէով՝ Шемаху. Абрамъ-беку Шахвердянцу. ուղարկել Սաղեանի Ընծայարանի գրադարանին:

Կառավարիչ Թեմին Շամախւոյ

Մակար Եպս. Բարխուդարեան:

***

Վաղը, ամսոյս 9-ին, հինգշաբթի օրը, սուրբ Վարդանանց տօնին քաղաքիս «Մետեխ» [illegible] նորակառոյց «Ս. Վարդան» [illegible] Տարուայ մէջ միայն այդ օրն է թոյլատրվում հասարակութեանը՝ առաւօտեան ժամի 9 ից մինչև երեկոյ ժամերգութիւններին և սուրբ պատարագին ներկայ լինել. Մուտքը բանտի արևելեան կողմի մեծ դռնիցն է.

***

Երկուշաբթի, փետրվարի 6-ին, վրաց բանկային Թատրոնում կայացաւ հայերէն ներկայացումն Գուցկովի «Ուրիէլ Ակոստա» դրամայի. Մենք յիշում ենք այդ ներկայացման մասին լոկ միայն այն պատճառաւ, որ պ. Պետրոսեանը շատ բարեխղճաբար ուսումնասիրել էր Ուրիէլ Ակոստայի դերը և զարմանալի է, թէ ինչպէս կարողացաւ այդքան գեղեցիկ խաղալ այդպիսի մի կատարեալ կարիկատուրային անսամբլով. Այդ երեկոյ մի զզուելի տպաւորութիւն էր անում այն, որ ոմանց բեմ դուրս գալուն պէս փլաքէօններն խոկոյն սկսում էին ծափահարութիւններն ու աղաղակները և շատերն էլ՝ [illegible] հեռանում. Խեղճ հայոց Թատրոն, կատարեալ [illegible] ասպարէզ են դարձրել քեզ.

***

Կիւրակէ, փետրվարի 5 ին Թիֆլիզի ժողովարանի դահլիճում կայացաւ կոնցերտ յօգուտ Սոլոլակի ձրի ճաշարանի տիկին Մ. Վ. Թամամշեանի նախաձեռնութեամբ. Մասնակցողներից աչքի էին ընկնում գեղարուեստասէր տիկին Տ. Միրիմանեանը, որ նուագեց «պերիֆրազներ Ռիգոլէտտոյից» Լիստի և իր փափուկ և արտայայտութեամբ ու տեխնիկայով լի խաղի համար արժանացաւ բուռն ծափահարութիւնների. Մեծ գեղարուեստական գրաւչութիւն պատճառեց հասարակութեանը իր ջութակով պ. Վասիլեվը, որ հիանալի նուագեց Բեթհովէնի «սոնատները» և Սարասատի «Գնչուների պարը». Պարոն Ճիրայրեանը իր բնդոյշ և զգայուն լի երգեցողութեամբ արժանացաւ բուռն ծափահարութիւնների. Կոնցերտից յետոյ տեղի ունեցաւ պար, որ շարունակուեց մինչև գիշերուան ժամը 3-ը. Երեկոյթի ընդհանուր հասոյթն ինչպէս ասում են հասնում է մինչև 1300 րուբլի.

***

Հինգշաբթի, փետրվարի 9-ին, ազնուականների բանկային Թատրոնում հայ դրամատիկական խումբը մասնակցութեամբ տիկին Ս. Ջիջեանի կը ներկայացնի «Արշակ երկրորդ» ողբերգութիւնը, 5 արարուածով, հեղին. Խ. վ. Դալիքեանի և «Դալալ Ղազօ», վօդեվիլը մէկ արարուածով. հեղինակ Փաղինեանի.

***

Գիւղական գործերին վերաբերեալ նահանգական ատեանն ընդհատեց առ ժամանակ իր նիստերը, ուր քննվում էր [illegible] Մինչև այժմ 8 նիստեր են եղել և վերանորոգելուց՝ յետոյ նիստերը կը շարունակուին մինչև ամսոյս վերջը.

***

«ԿԱՎԿԱԶ» ԼՐԱԳՐԻ ՄԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

—

«Կավկազ» լրագրի Ի. Ն. Մելիտինի ձեռքն անցած օրից մի ինչ որ Իվ-ով (Ив-овъ) շարունակ, գրեթէ իւրաքանչիւր համարում, տասնեակ սխալներով նամակներ է տպում «Письма изъ Кахетiи» վերնագրի տակ: Ինչպէս ամեն մի գրական արժէքից զուրկ գրուածք, նոյնպէս և այդ անվերջանալի նամակները ոչ ոքի ուշադրութիւնը չեն գրաւում և Իվ-ովը չէ կարողանում գոնէ լրագրական ժողովրդականութիւն ստանալ: Եւ ահա Կովկասի այդ աշխատակիցը իւր վրայ ուշադրութիւն դարձնելու համար դիմում է այն միջոցին, որին առ հասարակ ռուս մամուլի մի քանի օրգանների մէջ սովորութիւն ունին դիմել հաւատափոխ լեհացիները, պաշտօն փընտռող արտաքսուած նախկին ծառայողներ, և այլն: Իվ-ովը վճռել է հայհոյել հայերին: «Կավկազ» լրագրի աշխատակիցը խօսելով Կախեթիայի և Կախեթցի վրացիների մասին հետևեալ կոմպլիմենտն է անում նրանց, որ արքի ծառայութիւնից հեռու չի գնում.

Կախեթցի հարսնացուն — ասում է նա — իւր ամուսնու տուն մտած օրը, երբ նա մտնում է այնտեղ իբրև օրինական կին, իւր հետ բերում է մի կամ երկու զաւակ ու ոչ ոք դրա վրայ չի նայում նախապաշարմամբ (!!)».

Որքան մենք ճանաչում ենք մեր դրացի ազգերին ի թիւս նոցա և վրացիներին, վերջինների նահապետական կեանքի սրբութիւնն աղտեղուած չէ այնպէս, ինչպէս «Կավկազի» աշխատակից Իվ-ով-ն է կարծում:

Բայց այդ դեռ վրացիների մասին, որոնց ընտանեկան սրբութիւնը շօշափելուց յետոյ նա աշխատում է և գովել, այժմ լսեցէք թէ նա ինչ է ասում հայերի մասին.

«Վրացիներին կոյր կոյրի կապած — ասում է «Կավկազի» թղթակից Իվ-ովը — ապրում է Կախեթիայի գիւղերում մի ուրիշ տեղական ազգութիւն — հայկական. Հայերի մասին մենք վարժուել ենք (ինչ չիմար խոստովանութիւն) դատել յայտնի (?) և անյայտ (!) այն հարստահարիչների դասակարգին նայելով, որոնք կամ բուռ արհեստի կամ գործի սիրոյ (!) հարստահարիչներ լինելով, ամբար ցանցերով պարփակել են մեր (օճօ) երկիրը ամեն կողմից, որ Կովկասում խաղում են նոյն դերը, ինչ դեր որ խաղում էին Ռուսաստանում հրէաները. Իրենց ճանկոտ թաթերի (այդ՝ ոճ է) մէջ կաշկանդելով բոլոր բիւրաւոր (!) կարօտեալներին և ծանրաբեռնեալներին, նրանք ապրում են և հարստանում են իրենց կամաւոր և ակամայ կլիէնտների հաշուով, նրանց գրաւում են ձգում իրենց ցանցերի մէջ ծծում են նրանցից վերջին հիւթերը և ապա դէն են ձգում թողնելով գոհ դառնալ աղքատութեան.

Մարդուս յատուկ անարդարութեամբ մենք դէպի այդ մարդկային ցեղի արիւն ծծողներն ունեցած բնական ատելութիւնը ընդհանրացնում ենք ամբողջ ազգի վրայ և հարստահարչի զզուելի դէմքի հետ չենք ցանկանում տեսնել համակրական կողմերը նրանց ճնշեալ ազգակիցների. Արմեանին կամ [illegible] «Արմեաշկա» խօսքը դարձել է հոմանիշ ագահութեան, հարստահարութեան և այլ այսպիսի մոլութիւնների. սակայն նայեցէք, նայեցէք այդ ազնիւ, բարեսիրտ երկրագործ-հայերին, ինչով են նրանք տարբերվում իրենց դրացի վրացիներից.

Վաղուց բնակուած լինելով Կախեթիայում, բացառապէս պարապելով երկրագործութեամբ և այգեգործութեամբ նրանք ձուլուել են (!) տեղական ազգաբնակութեան հետ մինչև այնտեղ որ ընդունել են նրանց բնոյթը, սովորութիւնները. կորցրել են ամեն ինքնուրոյնութիւն (այսինքն հարստահարութիւն, վաշխառութիւն և այլն), մոռացել են մայրենի լեզուն: Միակ բանը որ մնացել է, այդ սեփական կրօնն է. Նրանք հաւատարիմ են այդ կրօնին, բայց յաճախում են վրաց եկեղեցի, որովհետև իրենց եկեղեցում ոչինչ չեն հասկանում, իսկ Աստուած — ասում են նրանք — ամեն տեղ մի է»:

Այս տաղ'րից յետոյ յօդուածի հեղինակն աւելացնում է թէ «արդար է այն առակը որ ասում է թէ ոչ թէ տեղն է մարդուն փառաւորում, այլ մարդն է շուք տալիս տեղին, բայց ոչ պակաս ճշմարիտ է և այն, թէ զբաղմունքը ազնուացնում է կամ փչացնում է մարդուն»:

Հէնց այդ իսկ խօսքերի վրայ հիմնուելով մենք կ'ասենք թէ ճշմարիտ է գրական զբաղմունքն ազնիւ զբաղմունք է, բայց ո՛չ ամեն մարդու կ'ազնուանայ գրականութեան մէջ մտնելով, մանաւանդ այնպիսի Իվ-ով-ները, որոնք իրենց յօդուածների նիւթերը քաղում են պատահական աղբիւրներից և ոչ մի օտար լեզուի հետ ծանօթ չլինելով, չգիտեն թէ այժմեան եւրոպական ամբողջ մամուլն գրաւուած է մի ազգով, որ երկրագործութեան, աշխատանքի և առաքինութեան իդէալն է համարվում. — Այդ ազգը՝ հայ ազգն է:

Բայց ինչ խօսել Իվ-ովների հետ. Մենք այս դէպքում միայն պիտի խօսենք «Կավկազի» պ. Խմբագրի հետ և նրան ասել պէտք է նոյնը, ինչ որ մի քանի տարի առաջ հանգուցեալ Ստեփանովը «Նովօյէ Օբօզրենիէ»-ն ասաց «Կավկազի» խմբագիր Տիւրենկովին: Մենք չենք զարմանում որ գտնուել է մի մարդ, որ գրել է այդ յօդուածը, բայց զարմանում ենք որ պ. Մելիտինը թոյլ է տուել այդ յօդուածը տպելու: Sapienti sat!

Ս. Հ.

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԵՐԴ (Խնուս) 14 յունվարի.

(Թղթակցութիւն „Արձագանքի")

—

Երկիւղն ու սարսափը տիրել է մեր երկրին. Մինչև այսօր երկիւղ կը կրէինք վայրենաբարոյ քրդերէն և աւազակ չէրքէզներէն, որոնք անսանձ կերպով կը յարձակուէին հայ գիւղերի և հարուստ հայ ընտանիքների ու գերդաստանների վրայ և ամեն՝ ինչ որ գիւրեկան կը թուէր յաչս իրանց՝ կ'աւրշտկէին և կը յափշտակէին: Այսօր այդ երկիւղի ու գրկանքի վրայ աւելացաւ և Թուրքաց Ֆանատիկոս մոլլայ ու սոֆտաների հայերու կոտորելու և ջարդելու սպառնական գոռում-գոչումներ, որոնք կատաղած վագրերի նման շարունակ փողոցէ փողոց թափառելով կը գրգռեն իրանց միւս տխմար կրօնակիցներին՝ մասնակցելու իրանց այդ արիւնահոս ձեռնարկութեանց.

Թուրք այդ մոլեռանդ կրօնականների առ հայերս ունեցած ատելութիւնն ու կատաղութիւնը այն ժամանակ աւելի բորբոքուեց ու սաստկացաւ, երբ նոքա տեսին եւրոպական քրիստոնեայ քննիչներին, որոնք պիտի գնային սգակիր Մուշ, աւերեալ Սասուն և քննութեան առնէին մուսուլմանների ձեռքով կատարուած այն անգթութիւնները, որոնց ենթարկուած է եղեր այդ գաւառների աշխարհաշէն խաղաղ ժողովուրդը.

Այդ օրուանից նոքա ոչ մի հայի, լինի նա գիւղացի թէ քաղաքացի, անծեծ և առանց լուտանքների չէ թողին, որոնք դժբաղդութիւն կունենային փողոցի մէջ, շուկաներում և այլ տեղերում հանդիպել նոցա: Փախլիներէն երեք անցեալ օրը կը պատահին Բերդից ձորի ճանապարհի մէջ Մահրուֆցի երկու գիւղացու. բացի նոցա ունեցած-չունեցածը առնելէն, կը մերկացնեն նոցա և մի այնպիսի ծեծ կուտան, որ 8 ժամուայ ընթացքում հազիւ կ'ուշաբերուին. ելնելէն իրանց այդ կրած ընդարմացած վիճակէն և կը մտնեն Բերդ: Արօս գիւղի և Բերդ-աւանի մէջ, որ միմեանցից կէս ժամուայ հազիւ հեռաւորութիւն լինի, դարձեալ սոլիգներէն օր-ցերեկով կողոպտեցան և ջարդուեցան Կովանդուկցի հինգ գիւղացիներ, իսկ Արօս և Խլբիս գիւղերի մէջ, որոնք նոյնպէս մի ժամ հեռաւորութիւն չունին միմեանցից, կողոպտուեցան հարկահաւաք գաղթեաններէն ու երկու էշաքչիներէն

Բաղէշցի երկու չարչիներ, որոնք 8 տարիէն աւելի կապրէին Արօս գիւղի մէջ, ուստա Մարտէի Թալալի մի անկիւն և Թափառաշրջիկ մանրավաճառութեամբ կը հոգթայթէին իրանց սև-օրուայ պարէն: Կողոպտուեցաւ նաև Մշեցի Հարուտ դրամատէր Խանիկ աղայի էշի քարավանը, որ մշտական սովորութեամբ 12—14 էշերով եկած էր Խնուս կոտւսում ձէթ փոխադրելու ի Մուշ: Ցերեկուայ-աւազակներ, որ բաղկացած են եղեր Բերրի (գայմագամանիստ) Թուրքերէն, կը վիրաւորեն քարավանի կառավարող Խանիկ աղայի որդուն և նորա մի ծառային, որ փորձեր էր դիմադրութիւն ցոյց տալ աւազակներին և օգնել իւր տիրոջ, և կը տանեն բոլոր կարաւանի էշերը՝ իրանց բեռներով և մարդկանց շորերով:

Խանիկ աղայի որդին իւր ծառաներով եկաւ Բերդ և ուզեցաւ մի առանձին հեռագրով տեղեկացնել Մուշ իւր հօր՝ Խանիկ աղային իրանցով անցած այդ դժբաղդութեան մասին և միւս կողմից բողոք-աղերսագիր ներկայացրեց տեղւոյս իշխանութեան ընդդէմ զիրենք կողոպտող չարագործների: Կառավարչական մարմինը արգելեց այդ հեռագիրը գլխաւորապէս նորա համար, որ մի գուցէ Խանիկ աղան, որ յայտնի է ընդհանուրիս իւր փողապաշտութեամբ և նենգամտութեամբ, վշտի այդ ծանրութեան տակ ինքնամոռացօրէն դիմէ այժմ Մուշ գտնուող եւրոպական քննիչ յանձնաժողովին և ստացած հեռագրի զօրութեամբ բողոք բառնայ նոցա առաջ, որի հետևանքը, այն էլ այսպիսի փափուկ ժամանակ, գուցէ այլ կերպարանք առնու: Այդ խնդիրքը տեղւոյս իշխանութեան խորհրդակցելու մեծ նիւթ է մատակարարած, մանաւանդ որ իրանց առաջ դրուած խնդիրը ճարպալի է, որից անհրաժեշտ օգտուել է հարկաւոր: Ցարդ կարող եմ ասել վճռուած չէ, թէ արդեօք հեռագրով իմաց տալ Խանիկ աղային և բոլորովին այլ իմաստով, թէ հրամայել նորա որդուն, որ դրամատիրութեան տեսակէտով ոչ պակաս է հօրէն, առանձին մարդ ուղարկել Մուշ և ուղղակի բերել տալ նորան Խնուս, ուր աւելի հեշտ լինի սուսափուս եղելութիւնը մի կերպով տեղն ու տեղը խեղդել: Բերդեցի մի խումբ Թուրք աւազակներէ կողոպտուեցան Մժնկերտ գիւղի երկու հարուստ տները: Մժնկերտի վանքը, որ կը գտնուի իւր համանուն գիւղի վերև և ¹/₄ ժամ հեռաւորութեան վրայ է Բերդ աւանէն, մեծ ուխտատեղի է. Իւրաքանչիւր իւր տօնի օր ուխտաւորաց մի հոծ բազմութիւն կը դրաւէ դէպի իւր դուռ: Շնորհիւ երկրի այս անտէրութեան, այս վերջին տարիներս, այդ էլ վերջացաւ:

Այս եղելութեան գործիչ հերոսները, ինչպէս քիչ վերև ասացի, Բերդի Թուրքերն են և կայրեն դայմագամի աչքի առաջ: Այժմ շատ հեշտ է երևակայել, թէ որպիսի վայրենի ընթացքի մէջ պիտի գտնուին կառավարչանիստ տեղերէն աւելի հեռու աւազակութեան ու կողոպուտի մէջ գարսւոր վարժ ու ընտել քրդերն ու չէրքէզներն՝ զրկել հայ գիւղացիների վերաբերմամբ...

Այսօր, եթէ տանջեալ և հալածեալ ժողովուրդին կայ մի մխիթարութեան նշոյլ, այդ անշուշտ պիտի ընդունենք հացի աժանութիւն հացըն առ այժմ սովորականէն զգալի կերպով աժան է: Եւ գուցէ արժան էլ մնայ, եթէ ի Բերդ, այլ և ամբողջ Խնուս թափուող զօրաց գնդերը բացի չթանձրանալէն, երկար էլ չմնան և չայրեն Խնուսում:

Բ. ցի

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ. Կոստանդնուպօլսից գրում են «Times» լրագրին յունվարի 26-ից. «Այն տաճիկ զինուորը, որ վերջերս Կոստանդնուպօլսում սպանութիւններ գործեց, կայսերական երկրորդ զօրաբանի ալբանական սէրժանտ է: Նա ոգևորուած է կրօնական մոլեռանդութեամբ մինչև խելագարութիւն: Այն ութ հոգուց, որոնց վրայ նա յարձակուել է, երկուսը Թուրք են, երեքը—հայ, երկուս—յոյն և մինը գերմանացի. վերջինիս սպանել է տեղն ու տեղը: Վիրաւորուած հայերից մէկի դրութիւնը շատ վտանգաւոր է: Բայց դրանից այդ կատաղի ֆանատիկոսն սպանել է երկու հայ կին, մի Թուրք կին, մի յոյն կին և երկու յոյն երեխաներ: Մարդասպանին ձերբակալել են մի մահմեդականի տանը: Հետևեալ օրը երեկոյեան՝ գաշոյններով զինուած երկու նաւաստիներ շրջում էին Պերայի փողոցներում և անցնողներին սպառնում էին:

—Königsberger Hartungsche Zeitung»-ին Բէյրութից հաղորդում են որ Ասորեստանի քրիստոնեաների դրութիւնը շատ վտանգաւոր է: Ջէզայիրլի գաւառում Դրուզները ամենաանամօթ կերպով կողոպտում և սպանութիւններ են կատարում: Բէյրութում և Դամասկոսում քրիստոնեաները գիշերը չեն համարձակվում տնից դուրս գալ: Դրուզների կատարած բռնաբարութիւնները և անգթութիւններն անպատիժ են մնում, այդ պատճառով նրանց յանդգնութիւնն օրէցօր աւելանում է: Դամասկոսի մահմեդականների Թաղը մեծ քանակութեամբ զէնք է հացրած: Քրիստոնեաները երկիւղ են կրում որ 1860 Թուի կոտորածը կը կրկնուի:»

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Փետրվարի 6 ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—«Նովոստի»-ն լուր է հաղորդում որ պատշաճաւոր շրջաններում մշակվում է մի ծրագիր, որով Թուրքեստանի գեներալ-նահանգապետութիւնը պիտի միացուի Անդրկասպեան շրջանի հետ և կազմուի մի ընդհանուր զինուորական վարչական ամբողջութիւն:

«Նով. Վր.» հաղորդում է, Թէ մի քանի գէմստվոներ միջնորդում են որ մասնաւոր գիւղատնտեսներին Թոյլ տրուի գիւղատնտեսական դպրոցներ անել քաղաքներում և գիւղերում:

ԵԱԿՈՀԱՄԱ.—Ջօբու վար Օյամայի պաշտօնական հեռագիրը ծանուցանում է Թէ չինական բոլոր նաւերը և բերդերը անձնատուր են եղել. չինական բերդապահ և նաւային զօրքերը կ'ուղարկուեն ճափոնական գործողութիւնների գծից դուրս, որտեղ նրանց ազատութիւն կտրուի. իսկ օտարականներին նաւերով աւելի հեռու կէտեր կը տանեն:

Մանջուրիայի առաջին զօրաբանակի հրամանատարը հեռագրում է Թէ 15,000 չինացիք ամրակեցին Հայցինք, բայց յետ մղուեցին մեծ կորուստ կրելով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Փետրվարի 2-ից.

Վեքսելի կուրս 3 ամսով.

Լոնդոնի վրայ 10 ֆ. ստ.	92,90
Բերլինի վրայ 100 մարկ	45,40
Փարիզի վրայ 100 ֆր.	36,77
Նոր կտրած պօլուիմպերիալներ	7,37 գն. 7,40 վաճ.
Բորսայի զեղջը	5-ից 7%
4% Պետակ. արժեթղթ.	97³/₈
5% ոսկ. արժեթ. 1894 թ.	162
5% Առաջ. ներքին փոխ. խաղատոմս 1864 թ.	229
5% Երկր. ներք. փոխառ. խաղատոմս 1866 թ.	226
5% Ազնուակ. հող բանկի գրաւակ. խաղատոմս	203
5% Պետակ. երկաթուղ. արժեթուղթ	101⁵/₈
4% Ներքին փոխ. I սեր.	97
" " " II "	96¹/₂
" " " III "	96¹/₂
" " " IV "	97
4¹/₂% փոխ. 1893 թուի	101⁵/₈
" փոխ. 1 հրատարակ.	101³/₈
" փոխ. 2 հրատարակ.	101³/₈
4¹/₂% Դրաւակ. արժեթղ. ազն. հողային բանկի	101¹/₄
4¹/₂% Գիւղական հողային բանկի վկայաթղթեր	101¹/₄
5% Ս. Պետ. քաղ. վ. բնկ.	101
" " Մոսկուայի	100⁷/₈
5¹/₂% Օդեսայի	100¹/₄
5% Թիֆլիզի	98¹/₄ գնողներ
5% Դրաւակ. արժթ. հող. բանկերի Խարկովի	100
" Պոլտավայի	100
" Տուլայի	100¹/₄
" Կիևի	100¹/₄
" Մոսկուայի	101¹/₂
" Բեսարաբիայի	99³/₄
" Ներքին-Սամարայի	100¹/₄
" Դոնսկոյ	99⁷/₈
" Վիլենսկի	100
6% և 5% Քութայիսի	101,99 գնողներ
" Թիֆլիզի	101,98¹/₂ գնողներ

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, ոփԹալմի և վեներական հիւանդութիւնների.

Ի. Մ. ՋԻԿԱՂԵԱՆ—9—10 ժ. աչքի ներքին և ներքայ հ.

Դ. Գ. ԲԱՒԴԱՂԵԱՆ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½, ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ բժիշկ-խորհրդացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն.

Վճար 50 կ. համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին.

Հիւանդանոցումը ընդունւում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝ Բժշկապետ Նաւասարդեան.

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ

ԲԺՇԿ. ԴՈԿՏՈՐ

ԱՒԵՏԻՔ ԲԱՐԱՅԵԱՆԻ

Սօլօլակ, Սեյգիևսկի փողոց № 14

Բացի դեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԷԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական մեթօդներ.

ՆԵՐՔԻՆ և ՆԵՐՎԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը	կինարմատներ և երեխաներ
1½—2 ըժ. ցերեկը և 7-ին սոտ երեկոյեան	տղամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ — մասսաժ անող կին և մասսաժիստ պարոն.

Քաղաքային հիւանդանոց

(Մուխրանեան փ., տ. Կուզանեանի, № 15. Հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երջանիկ հիւանդների համար 1866 Թ. ապրիլի 4-ի յիշատակին).

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձրիաբ առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. Արծրունի — ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն օր.

Կ. Ա. Ղաջանով—ներքին և երեխանց, ժ. 10½—12 ամեն օր.

Գ. Գ. Գուլամիրով—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 12—1 ամեն օր.

Բժշկուհի Գ. Կոլցովսկայ. սիֆիլիս և մէզի անդ. հիւանդ. 11—12 ամեն օր.

Մ. Ա. Միրզոյեան—ներքին և վեներական. ժ. 12—1 ամեն օր բացի հինգշաբթի.

Բժ. Մ. Չախմախչեան—ներքին հիւանդութիւն. 12—1 ամեն օր.

Բժ. Գիւլօբե — ներքին և երեխանց հիւնդ. 12—1 ամեն օր.

Կին-բժ. Մ. Ա. Խումաշեան—կանանց ժ. 9—11 ամեն օր.

Ն. Գ. Կալանթարեան — ներքին և երեխանց, ժամը 11—12 ամեն օր.

Կին-բժ. Լ. Ե. Մարգինիանց—կանանց, ժամը 11—12 ամեն օր.

Ե-ի. Ա. Թադէոսեան—ներքին, երեխանց և ստամքի, ժամը 9—10 ամեն օր.

Մ. Ա. Թերզիբաշեան—ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր.

Գ. Ն. Սարգսեան—ներքին, մէզի անդ. և վեներական, ժամը 12—1 ամեն օր.

Գ. Ա. Թադէոսեան — ներքին և խիրուրգ., ժ. 12—1 ամեն օր.

Կին-բժ. Ս. Ա. Զիզով—աչքի և կանանց, ժամը 12—1 ամեն օր.

Ատամն. բժ. Ա. Օ. Օհանեան—ատամներ, ժամը 10—11 ամեն օր.

Կոնսուլտացիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. Ծաղկի պատուաստումն—չորեքշաբթի և շաբաթ օրերը, ժամը 9—1.

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Կախեթինսկայա փ., տ. Տէրտէրեանի)

Մ. Ա. Քալանթարեան—ժամը 11—12 ամեն օր.

Կին-բժ. Մ. Ա. Խումաշեան—կանանց, ժ. 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը.

ԽԱՐՓՈՒԽԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Բաննիա փողոց, տ. Ենիկոլոպեանի)

Գ. Բ. Տէր-Առաքելեան—ժամը 11—12 ամեն օր.

Կին-բժ. Մ. Ա. Խումաշեան—կանանց, ժ. 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը.

Դեղատուն.—Զրուցը անձերին բժշկական խորհուրդ և դեղեր տրւում են ձրի.

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝— Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. և 12-ին 25 ր.

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Դանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Դանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին.

Ապրանքա-մարդատար գնացքը Դանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտուայ 7 ժ. 35 րոպէին.

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԵՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղարկվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ը երեկոյեան.

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղարկվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան.

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղարկվում է առաւօտեան ժամը 8 ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան.

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղարկվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան.

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պօլսի միջեւ.

Բաթումից դուրս է գնում.

Շաբաթ օրերը (յետ կիրակի գիշերուայ 3 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները.

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով. Նովօրօսիսկի, Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սևաստոպոլի և Եւպատորիայի վրայով.

Երեքշաբթի օրերը յետ չորեքշաբթի գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար շոգենաւը բոլոր նաւահանգիստները.

Չորեքշաբթի օրերը—յետ հինգշաբթի, գիշերուայ 3 ժամին, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները.

Օդեսայից դուրս է գնում.

Երկուշաբթի օրերը—առաւօտեան, ուղիղ ընթացքով.

Չորեքշաբթի և ուրբաթ օրերը—երեկոյեան, շրջանառու ընթացքով.

Երկուշաբթի օրերը—գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար շոգենաւը, շրջանառու ընթացքով.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիզի փոխադարձ վարկի ընկերութիւնը

ՀԱՏՈՒՑԱՆՈՒՄ Է

Ընթացիկ հաշուով հասարակ	3%
» » պայմանաւոր	3¹/₂%
Դրամական աւանդներով ցպահանջ	3%
» » 6 ամսով	4%
» » 1 տարով և աւելի	5%

ՎԵՐՑՆՈՒՄ Է

Առևտրական մուրհակների զեղջման	7%
Սօլօ-վէքսելների զեղջման, ապահովուած.	
ա) Ապրանքներով	7%
բ) Անշարժ կալուածքներով	7¹/₂%
Փոխատուութիւնների % թղթերի գրաւականով.	
ա) Պետական բանկից ընդունուող	6%
բ) Տէրութիւնից ոչ ապահովուած	6¹/₂
գ) Պետական բանկից չընդունուող	6¹/₂
Փոխատուութիւններով ապրանքների և զանազան տոացականների	7%
Փոխատուութիւնների ցպահանջ (on call)	6¹/₂%
Մասնաւոր ընթացիկ հաշիւների	
ա) ապահովուած % թղթերով	6¹/₂%
բ) » մուրհակներով	7¹/₂%
Տոկոսաբեր թղթերի և կտրոնների զեղջման	7%
Յանձնարարութիւնների	¹/₁₆ մինչև 2%

(3—3)

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԵՆ —

		Ռ.	Կ.
1.	Ճէյքբ, Ֆրանկլին, 2 տիպ. սպառուած	—	—
2.	» Վաշինգտոն, 2 տիպ »	—	—
3.	» Հոմերի Իլիականը, պատկերներով	1	—
4.	» Հոմերի Ոդիսականը, »	1	20
5.	» Ուէլնեկէ աղուէսը,	—	60
6.	Սմայլս, Բնաւորութիւն	1	50
7.	» Ինքնօգնութիւն	1	50
8.	Ամիչիս, Սիրտ	1	—
9.	» Ապէնիններից մինչև Անդէրը	—	20
10.	» Ուստեծ և Զօհրապ	—	20
11.	Ճէյմս, Աւազակներ, ողբերգութիւն	—	50
12.	Տօլստոյ, Ռոբինզօն, փոքրերի համար	—	20
13.	» Կոլումբ, » »	—	15
14.	Հոլլէ, Բէամթրիչէ, վէպիկ	—	30
15.	» Նօնցայի բերդը, վէպիկ	—	30
16.	Վալտէր, Հաւատարիմ Սավիտրին *)	—	10
17.	Իրվինգ, Մահմեդի կեանքը	1	20

ՇՈՒՏՈՎ ԿԸ ՏՊՈՒԻ

2. Դիքքենս, Դաւիթ Կոպպերֆիլդ, երեք հատոր, անգլիերէնից.

Վաճառվում են Թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Ананоское училище, և կենտրոնական գրավաճառանոցում.

*) Տպագր. հրատարակչ. Ընկեր.

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՍՏԱՆԻՍԼԱՎ ՉԱՐԱԽՉԵԱՆՈՎԻ

Articles de Paris et Nouveautées. Stanislav Charakchianoff

Maison fondée en 1870

(Դվօրցովայա փողոց, շտաբի հանդէպը)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՆՈՐԱՁԵՒ ԵՒ ԳԱԼԱՆՏԵՐԵԱՅԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ.—

ԿՈՐՍԵՏՆԵՐ 2 ռ. 50 կ.-ից սկսած: ԴԻԽԱՐԿՆԵՐ տղամարդկանց համար: ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹԻՒՆՆԵՐ—անուշաբոյր օծանելիք գլխաւոր գործարաններից: Ձեռնոցներ, գուլպաներ, հովանոցներ, ծաղիկներ, հովհարներ, ալբոմներ, նեսեսէրներ, պորտ-մոնէ: Բիւրեղեայ, յախճապակեայ զարդարանքի իրեղէններ: Ջքեղ իրեր ընծաների համար, խաղալիք և տիկնիկներ:

Օտարաքաղաքացոց պատուէրները կատարվում են ամենայն ճշդութեամբ: (100—90)

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ ՄՈՍԿՎԱ

ՃԵՄԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ

հետևեալ տպագրութիւններն ու հրատարակութիւնները.

1) Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861 թ.	Սպառուած են	2 50
2) Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական. 1861		3 —
3) Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութ. Հայոց 1860		1 —
4) Всеобщая Исторія Вардана Великаго (XIII в.) переводъ съ армянскаго съ объясненіями и приложеніями 1861		4 —
5) Всеобщая Исторія Степаноса Таронскаго Асохика по прозванію (XI в.), пер. съ армянскаго съ объясненіями и прилож. 1864		4 —
6) Синодальное слово Нерсеса Ламбронскаго (XII в.) переводъ съ армянскаго, 1864		2 —
7) Шараканъ (Շարական) богослужебные каноны и пѣсни армянской Восточной Церкви. Полный переводъ. 1879 (մնացել է միայն մի քանի օրինակ)		6 —
8) Армянскія надписи въ Карсѣ и Ани и въ окрестностяхъ послѣдняго, текстъ и переводъ, 1885		1 50
9) Очеркъ Исторіи Армянской Восточной Церкви, 1864		—65
10) Очеркъ религіи языческихъ армянъ (изслѣдованіе) 1864		1 50
11) Отвѣтъ на замѣчанія г. Патканова, 1874		—65
12) Моисей Хоренскій и древній эпосъ армянс. (изслѣдованіе) 1881		1 —
13) Династическій списокъ Хайкидовъ (изслѣдованіе) 1884		—65
14) Сказаніе о Романѣ и Давидѣ (Борисѣи Глѣбѣ) по Арм. Четьи-Минеямъ (пер. съ армянскаго)		—75
15) Сказаніи о Свв. Өаддеѣ и Вароломеѣ апостолахъ Арменіи (пер. съ армянскаго)		—75

Գրքերի գները հաշուած են ճանապարհածախսով հանդերձ. — Այս գրքերից գնել ցանկացողները Թող բարեհաճեն գիմել իրանց պատուէրներով Ճեմարանի կառավարութեան այսպիսի հասցէով.

Въ Правленіе Лазаревскаго Института восточныхъ языковъ (Москва) նոյն տեղում վաճառվում է նոր լոյս տեսած.

Исторія Арменіи Моисея Хоренскаго Новый переводъ Н. ЭМИНА съ армянскаго языка на русскій съ примечаніями иприложеніями, Москва 1893 г. цѣна 2 р. съ пересылкою 2 р. 25 коп. 4—1